

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Սպասելով Անողոք Պայքարին

Եւրոպայի խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) ամպիոնէն անցեալ շաբաթ իր ունեցած ելոյթի ընթացքին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան այլ հարցերու կողքին անդրադարձաւ նաեւ ներքին բարեփոխումներուն, անոնց շարքին կաշառակերութեան դէմ տարուող «անողոք պայքարի» մասին ու այս առթիւ վստահեցուց, որ Հայաստան «արմատախիլ պիտի ընէ այդ պատերազմը» եւ ընդգծեց, որ մօտ 500 պաշտօնեաներ պարտաւոր են յայտարարագրել իրենց եկամուտներն ու գոյքը:

Գիշդ է որ, պետական բարձրաստիճան պաշտօնեաները պարտաւոր են ամէն տարի ներկայացնելու իրենց ունեցուածքի մասին յայտարարագիր ու անոնք պարտաճանաչութեամբ կը կատարեն օրէնքի այդ պահանջը: Սակայն, խնդիրը կը կայանայ յայտարարագիրներու ստուգման բացակայութեան եւ անհետեւանք մնալուն մէջ:

Յաճախ այդ յայտարարագիրներուն մէջ կը տեսնենք, որ տուեալ պաշտօնեան ունի երկու շքեղ մեքենայ, երկու առանձնատուն, դրամատան մէջ այսքան հազար տոլար, նոյնքան եւրօ եւ մի քանի միլիոն դրամ: Մէկ տարի ետք, նոյն պաշտօնեան կը յայտարարէ, նախորդ տարուայ կրկնապատիկը ունեցուածք, առանց բացատրութիւն տալու, թէ պետական համեստ աշխատավարձով ինչպէս կարելի եղած է յաւելեալ հարստութիւն դիզել: Իսկ երբ մամուլը իրենց հարց տայ այդ ուղղութեամբ, բոլորն ալ ունին պատրաստի պատասխան. «Մոսկուայէն ընկերոս նուիրեց կամ սանիկա նուիրեց»: Հետաքրքրական է որ, բոլորն ալ Մոսկուայի մէջ ունին հարուստ ընկերներ եւ սանիկներ:

Նախագահի ելոյթը մտիկ ընող եւրոպացիներուն համար այդ խօսքերը հաւանաբար մեծ գոհունակութիւն պատճառեցին: Սակայն, Հայաստանի բնակչութեան համար կաշառակերութեան դէմ «անողոք պայքարի» եւ կոռուպցիան «արմատախիլ» ընելու մասին խօսքերը ձեւական բնոյթ կը կրեն եւ կը գործածուին միմիայն արտաքին սպառման համար:

Կաշառակերութեան դէմ անողոք պայքար մղելու եւ կոռուպցիան արմատախիլ ընելու համար առաջին հերթին պէտք է շարժի դատախազութիւնը, յայտարարուած գումարներու ճշգրտութիւնը եւ աղբիւրները ստուգելու համար: Այլապէս, նախագահի տուած հաւաստիացումները կը դառնան իմաստազուրկ, ոչ մէկ բան կը դառնայ արմատախիլ ու երկիրը կը շարունակէ մնալ կոռուպցիայի ճիրաններուն մէջ:

«ՍԱՍԻՍ»

## Երեւանի Մէջ Մեծ Շուքով Նշուեցաւ ՍԴՀԿ 130-Ամեակը

Յունուարի 26-ին, Երեւանի «Մոսկուա» կինոսրահէն ներս տեղի ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հիմնադրութեան 130-ամեակին եւ Հայաստանի կազմակերպութեան 11-րդ համագումարի բացման նուիրուած հանդիսութիւնը, որուն ներկայ էին մօտ 700 պատուիրակներ եւ հրաւիրեալներ, որոնց շարքին՝ ՍԴՀԿ Հիմնադրութեան ֆրանսիացի վարիչ Մարմիններու անդամներ, ՌԱԿ-ի եւ ՀՅԴ-ի ներկայացուցիչներ, ՀՀԿ խմբակցութեան պատգամաւորներ, «ԵԼՔ» դաշինքի ներկայացուցիչներ, պատմաբաններ, մտաւորականներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետութեան օրհներգն ու ՍԴՀԿ քայլերգը կատարեցին Հայ Մարմնամարզական Միութեան նորաստեղծ նուագախումբը, որմէ ետք Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմէ «Հայր Մերով» միջոցառումը սկսաւ Մայր Աթոռի միաբան վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը:

ՀՀ Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան միջոցառման սկիզբը ընթացեց նախագահ Սերժ Սարգսեանի ուղերձը. «Ջերմօրէն շնորհակտորում եմ ձեզ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հիմնադրման 130-րդ



Տեսարան մը ՍԴՀԿ հիմնադրութեան 130-ամեակի հանդիսութեան սրահէն

տարեդարձի կապակցութեամբ: Հիմնադրումից ի վեր ՍԴՀԿ-ն եղել է հայոց ազգային կեանքի առաջատար ուժերից մէկը: Կառուցել իր 130-ամեայ գործունէութեան ընթացքում մշտապէս համախմբել է ազգանուէր գործիչներին, որոնք անմնացօրոք նուիրուել են հայրենիքի պաշտպանութեան, շէնացման եւ համայնքային կեանքի կազմակերպման առաքելութեանը: Այսօր էլ տարիներ չհեռուից ՍԴՀԿ-ն շարունակում է հաւատարիմ մնալ իր որդեգրած հիմնական սկզբունքներին՝ հայապահպա-

նութեանը եւ Հայկական հարցի արդար լուծմանը: Տասնամեակներ ընթացքում ՍԴՀԿ-ի գործունէութիւնը իր ծիրում ներառել է կրթական, մշակութային, բարեսիրական, մարզական մի շարք ոլորտներ: Անկախութիւնից ի վեր ՍԴՀԿ-ն իր մասնակցութիւնն է բերում նաեւ Հայոց պետականութեան կայացման եւ զարգացման գործում: Այս տարի ազգովի փառաբանում ենք Հայաստանի Հանրապետութեան եւ մայրսեան

Շար.ը էջ 6

## Լոս Անճելըսի Մէջ Տօնակատարուեցաւ Հայոց Բանակի 26-րդ Տարեդարձը



Համայնքի կազմակերպութիւններուն հետ հանդիպումի ընթացքին՝ Մարատ Պետրոսեան, Արծրուն Յովհաննէսեան եւ Նարեկ Մալխասեան

Իրանահայ Միութեան կազմակերպութեամբ եւ Հայաստանի Հիւպատոսութեան հովանաւորութեան տակ նշուեցաւ Հայոց Բանակի 26-րդ Տարեդարձը՝ Իրանահայ Միութեան Կլէնտէյի կեդրոնէն ներս, Կիրակի, 28 Յունուար, 2018 -ին:

Ներկայ էին գաղութիս բոլոր կազմակերպութիւններու ներկայացուցիչները եւ հոծ բազմութիւն մը: Օրուայ գլխաւոր հիւրերն էին հայրենիքէն ժամանած, Ապրիլեան պատերազմի հերոսներ՝ Նարեկ Մալ-

խասեան եւ Մարատ Պետրոսեան, որոնց կ'ընկերակցէր Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի քարտուղար՝ Արծրուն Յովհաննէսեան:

Ձեռնարկը սկսաւ Ամերիկայի, Հայաստանի եւ Արցախի քայլերգներով, նաեւ յոտնկայս մէկ վարկեան յարգելով լիշատակը բոլոր հայ ազգի զոհուած զինուորներուն եւ հերոսներուն:

Շար.ը էջ 7

## «Ղարաբաղեան Հակամարտութեան Փաթեթային Հանգուցալուծումը Ունի Նաեւ Փուլային Կիրառում». Ըսաւ. Է. Նալպանտեան

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նապանտեանի խօսքով, ղարաբաղեան հակամարտութեան փաթեթային հանգուցալուծումը ունի նաեւ փուլային կիրառում:

Ներկայացնելով 2017տարուայ ընթացքին նախարարութեան գործունէութիւնը, Էտուարտ Նապանտեան լրագրողներու հետ հանդիպման ժամանակ, ընդգծեց, որ եռանախագահող երկիրները բազմիցս յայտարարած են, որ հակամարտութիւնը պէտք է լուծուի այն սկզբունքներու, տարրերու հիման վրայ, որոնք մշակուած ու ներկայացուած են կողմերուն որպէս մէկ ամբողջութիւն, որպէս փաթեթ:

«Փորձել առանձնացնել մէկ սկզբունքը, կամ դրոյթներէ մէկը միւսներէ, անհնար կը դարձնի հիմնախնդրի կարգաւորումը: Այս փաթեթային մօտեցումն է, որն առաջարկուած է եռանախագահող երկիրներին կողմից եւ դրա մասին նաեւ բազմիցս յայտարարուել է՝

Շար.ը էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչ Չէր Կորցրել Սերժ Սարգսեանը Դաւոսում. Կարէն Կարապետեանն Աւելի Յարմար Էր

Ն. ՅՈՎԱԵԹԵԱՆ

Վերջին օրերին աշխարհի ուշադրութիւնը բեւեռուած էր Շուէյցարիայի Դաւոս քաղաքում անցկացուած 2018թ. համաշխարհային տնտեսական ֆորումի վրայ: Վերջինիս մասնակցելու համար Դաւոս էին մեկնել համաշխարհային գրեթէ բոլոր առաջնորդները՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի գլխավորութեամբ: Սակայն եթէ նախորդ տարիներին ֆորումի կեդրոնական դէմքը ԱՄՆ նախագահն էր՝ հաշուի առնելով ԱՄՆ-ի գերտիրապետող դերքը համաշխարհային տնտեսական յարաբերութիւնների կարգավորման գործում, ապա այս տարի իրավիճակը էականորէն տարբերուած էր: Նախ ցատկանշական է, որ դեռեւս Թրամփի նախընտրական քարոզարշաւի շրջանում, երբ նա հանդէս էր գալիս հիմնարար վերափոխումների կարգախօսներով ու պահանջներով, համաշխարհային ֆինանսա-կորպորատիւ դերակատարները անհանգստացած էին հնարաւոր բացասական զարգացումներից: Սակայն նրա նախագահութեան մէկ տարին իսկ ցոյց տուեց, որ Թրամփը ոչ թէ փորձում է փոխել հաստատուած կարգերը, այլ ընդամենը մեկուսացնում է Միացեալ Նահանգները: Թէպէտ ԱՄՆ-ի մեկուսացմամբ որոշակի տեղաշարժեր, այդուամենայնիւ, իրականանում են, սակայն յեղափոխական վերափոխումների մասին խօսել չի կարելի: Ի վերջոյ, վերափոխումներ Թրամփը կարող էր կատարել՝

անմիջական մասնակցութիւն ցուցաբերելով, մինչդեռ ԱՄՆ-ի սահմաններում պարփակուելով ու Հիւսիսային Քորեայի առաջնորդի հետ թուիթերում լեզուակոռուի մէջ զտնուելով՝ հազիւ թէ նրա մօտ ինչ-որ բան ստացուէր: Եթէ մէկ տարի առաջ ողջ Եւրոպան շունչը պահած սպասում էր, թէ էքսցենսորիկ Թրամփը ինչ նոր գլխացաւանք է մատուցելու հին մայրցամաքին, ապա այսօր համընդհանուր հանգստութիւն է տիրում՝ արձանագրելով, որ կարելի է նաեւ առաջ շարժուել առանց ամերիկեան ուղղորդութեան: Դաւոսում հաւաքուած ֆինանսա-կորպորատիւ համաշխարհային վերնախաւը կեդրոնացաւ փոխկապակցուածութեան ու համատեղ առաջընթացի հարցերի քննարկման վրայ՝ գլոբալիզացիայի հարցում մէկ քայլ իսկ նահանջ թոյլ չտալու պատրաստակամութեամբ: Թէպէտ ԱՄՆ գործող նախագահը ներկայացնում է գլոբալիզացիայի հակադիր թեւը, սակայն այդ գաղափարները այսօր համաշխարհային հարթուած լուսանցքային են: Ի վերջոյ, ազատ առեւտրի պայմաններում 2017թ. համարում է բիզնեսի ու ֆինանսական հոսքերի առումով լիովին յաջողուած տարի՝ գերծ լուրջ ճգնաժամերից, շուկայի վայրկեւեւորումներից, եւ որ ամենակարեւորն է՝ առանձնանալով աճի տեմպերով: Հետաքրքիր է, որ Թրամփի ուղերձը Դաւոսի համաժողովի մասնակիցներին կարծես այնքան էլ չէր հետաքրքրում՝ նկատի ունենալով

հանգամանքը, որ բոլորի ակնկալութեամբ նա պէտք է խօսի ԱՄՆ-ի բացառիկութիւնից ու իր պետութեան շահերը ամէն ինչից վեր դասելու մասին: Եւ Թրամփի ելուցքը Դաւոսում հիմնուած էր բոլորին հասցնելու իր կարգախօսը՝ առաջնայինը ԱՄՆ-ի շահերն են: Այս առումով Թրամփը կարող է սոսկ որոշակի մասնակցութիւն ունենալ համաշխարհային տնտեսական յարաբերութիւնների գործացմանը, բայց ոչ երբեք հաւակնել դրանք առաջնորդելուն: Ֆրանսայի նախագահ էմանուել Մակրոնն արդէն իսկ հասցրել է ծաղրաբար արձագանքել Դաւոսի այս համաժողովին Թրամփի մասնակցութեանը: Մակրոնը յայտարարել էր, որ ակնյայտօրէն Դաւոս չեն հրաւիրուել համաշխարհային տաքացման ու կլիմայի փոփոխութեան հանդէպ թերահաւատ մարդիկ: Մակրոնն աւելի հեռուն է գնացել՝ լայն ներկայացուցչական կազմի առաջ կատակելով, որ գալով Դաւոս ու ձիւն տեսնելով, իհարկէ, դժուար է հաւատալ գլոբալ տաքացմանը: Յայտնի է, որ այդպէս թերահաւատ է առաջին հերթին ԱՄՆ նախագահը, որն իր երկիրը դուրս բերեց Փարիզի կլիմայի համաձայնագրից: Թրամփի դէմ հեռակա կրակոցներից չեն խուսափել նաեւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն ու Իտալիայի վարչապետ Պաոլո Ջենտիլոնին՝ յատկաօրէն մերժելով մի պետութեան շահերը սպասարկելու ու փոխշահաւետութեան սկզբունքը արհամարհելու նոր քաղաքական միտումներ:

Սերժ Սարգսեանի Ամենամեծ Նուէրը Բանակին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Անձամբ ես ջանք չեմ խնայելու, որ մեր բանակը դառնայ առաւել արդիական, նախօրէին յայտարարել է Սերժ Սարգսեանը Եռաբլուրում, հայկական Բանակի օրուայ առիթով: Սարգսեանի յայտարարութիւնը հերթականն է, որ հանրային կարծիքին հիմք է տալիս դիտարկել նրա հաւանական քաղաքական պլաններն ու առնուազն հարց տալ՝ ի՞նչ կարգավիճակով է Սարգսեանն իր անձնական ջանքը ներդնելու բանակի արդիականացման գործում՝ վարչապետի՞, պաշտպանութեան՞ նախարարի՞, իսկ ուրիշ ի՞նչ կարգավիճակով նա կարող է անել դա: Նրա յայտարարութիւնը շատերի համար է եզրակացութեան հերթական հիմքը, որ Սարգսեանը գնում է վարչապետի պաշտօնին առաջադրուելու ճանապարհով: Միւս կողմից, իհարկէ հնարաւոր է բանակի արդիականացման համար ջանք չխնայել եւ անձնական մեծ ջանք դնել ցանկացած կարգավիճակում՝ անելով եղած հնարաւորութիւնների առաւելագոյնը: Այդ տեսանկիւնից, ՀՀԿ նախագահի կարգավիճակը խոշոր հաշուով բաւականին կարեւոր եւ գործունակ կարգավիճակ է այդ ջանքը ներդնելու համար եւ ըստ այդմ, զուտ ֆորմալ տեսանկիւնից դա եւս կենսունակ հարթակ է: Այստեղ սակայն, հնարաւոր պլաններից ու թրթիւկներից վեր, անհրաժեշտ է թերեւս խնդիր դիտարկել առաւել խորքային քաղաքական գործօնների համախմբում:

Ըստ այդմ, հարկաւոր է նախ հասկանալ՝ ի՞նչ է նշանակում բանակի արդիականացում, ինչն է դրա աներկբա անհրաժեշտութիւնը: Դա ինքնիշխան պետական քաղաքականութեան կարողութիւնն է, ինչը նշանակում է ներկայումս Ռուսաստանից ունեցած գերկախուածութեան թուլացում՝ յատկապէս անվտանգութեան հարցերում գերկախուածութեան: Օբեկտիւ է դա, թէ սուբեկտիւ, ինչպիսին է յարաբերակցութիւնը, այլ հարց է, սակայն հայկական բանակի արդիականացումը պահանջում է Ռուսաստանից գերկախուածութեան նուազեցում: Ընդ որում, դա պէտք է տեղի ունենայ ոչ թէ հայ-ռուսական ռազմական, ռազմա-տեխնիկական կամ ռազմա-քաղաքական գործակցութեան հաշուին, այլ նոր յարաբերութեան, նոր կապերի, կամ այլ ուժային կեդրոնների, առաջին հերթին Եւրասիական տեխնոլոգիայի, յետոյ նաեւ Չինաստանի հետ յարաբերութիւնների ընդլայնման ու խորացման հաշուին: Այսինքն, խնդիրը ամենեւին հայ-ռուսական յարաբերութեան նուազեցումը չէ, այլ միւս ուղղութիւններով յարաբերութիւնների աշխուժացումը եւ ծաւալային ընդլայնումը: Առաւել եւս, որ հենց այդ՝ առաջին հերթին ՆԱՏՕ ուղղութեան վրայ է գինուժի արդիականացման տեխնոլոգիական կարեւոր պաշարը, փորձը: Առանց այդ ամէնի, հայկական բանակի արդիականացումը կը լինի բարի ցանկութիւն, կենաց:

անհրաժեշտ է հայկական պետական քաղաքականութեան կարողունակութեան բարձրացում: Դրա տեսական հնարաւորութիւնը, թէկուզ ներկայիս վիճակի հետ համեմատութեան մէջ, առկայ է կառավարման նոր մոտելի պարագայում: Բայց, պայմանով, որ Սերժ Սարգսեանը չլինի այդ մոտելի դէ իւրէ գլխավորողը: Անկասկած է, որ առնուազն տեւական ժամանակ դէ ֆակտո նա է գլխավորելու այն՝ ՀՀԿ նախագահի կարգավիճակով: Եթէ այլ է լինում դէ իւրէ գլուխը, կամ աւելի շուտ դէ իւրէ լինում է ոչ թէ գլուխ, այլ իշխանութեան միմեանց հակադրող ինստիտուտները ու թեւեր, ապա Հայաստանի իշխող համակարգն իր այդ պակեղորոնացմամբ եւ բազմաշերտութեամբ առնուազն համեմատութեան մէջ ստանում է աւելի ճկուն լինելու նուազագոյնը տեսական հնարաւորութիւն: Ըստ այդմ, հայկական բանակի արդիականացման գործում Սերժ Սարգսեանի անմնացորդ ջանքը կարող է լինել դէ իւրէ իշխանութիւնն անմնացորդ թողնելն ու ՀՀԿ նախագահի կարգավիճակով մնալը: Բանակի արդիականացման համար առանցքային քայլը կարող է լինել դա, ոչ թէ եօթնամեայ ծրագրի մշակման յանձնարարութիւնը, որը փաստօրէն կատարուել է եւ ծրագիրը արդէն ներկայացուել է Սարգսեանին: Այդ ծրագիրը կարող է կենսունակ եւ արդիւնաւէտ լինել, եթէ Սերժ Սարգսեանը հրաժարուի վարչապետ լինելու ծրագրից, եթէ իհարկէ ունի այդպիսին: «ԼՐԱԳԻՐ»

րը: Թէպէտ եւրոպական առաջնորդները անուանապէս չեն յիշատակել Թրամփին, սակայն նրանց վերոնշեալ յայտարարութիւնները, պարզ է, առաջին հերթին վերաբերել են ԱՄՆ նախագահին: Հայաստանը Դաւոսի համաժողովին ներկայացնում էր վարչապետ Կարէն Կարապետեանը: Հաշուի առնելով Դաւոսում տեսանկարահանող սարքերի առատութիւնը, թուում էր, «մարդամէջ» դուրս գալու հնարաւորութիւնից չպէտք է հրաժարուէր առաջին հերթին Սերժ Սարգսեանը: Սարգսեանը համաշխարհային տնտեսական ֆորումին մասնակցել է միայն 2009թ., այն էլ արտաքին աշխարհում Մարտի 1-ի սպանդից յետոյ լեզիտիմութիւն որոնելիս, մինչդեռ այժմ նման խնդիր չկար: Նա Դաւոսում, ըստ էութեան, անելիք չուներ, քանի որ նախօրէին արդէն իսկ արժանացել էր Մակրոնի համաձայնութեանը իր յետնախագահական վարչապետութեան հարցում: Սերժ Սարգսեանի աչքերով Հայաստանի տնտեսութիւնը չի կարող վեր լինել ռուսական ֆիլեալի մակարդակից: Այստեղ խորթ են Դաւոսում քննարկուող ազատական տնտեսութեան, համաշխարհային փոխգործակցութեան, միասնական ջանքերի ներդրման ու փոխշահաւէտ տնտեսական ծրագրեր իրացնելու հարցերը: Ի վերջոյ, Սարգսեանը դժուար թէ այնտեղ կարողանար համոզել, որ տնտեսական մենաշնորհները, բնակչութեան հանդէպ հարկային տեւորը, կոռուպցիան ու հովանաւորութիւնը կենսական անհրաժեշտութիւն են: Ով կը հաւատար այնտեղ Սերժ Սարգսեանին, եթէ նա պնդէր, թէ 2017թ. ֆինանսական ճգնաժամի տարի էր: Մինչդեռ ապագայ «յատուկ փոխվարչապետ» Կարէն Կարապետեանն իր ժպտադէմ յորդորներով աւելի յարմար էր Դաւոսում չնկատուելու համար: «ԺՈՂՈՎՈՒՐԴ»

ՄԱՍԻՍ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ 1-ի Հարցը Ազգային Ժողովի Լիազույնար Նիստին կը Քննարկուի



Արխիվային նկար. Երեւանի մէջ ցոյց Մարտի 1-ի բացայայտման պահանջով

Մարտ 1-ի տասներորդ տարելիցին ընդառաջ ընդդիմադիր «ԵԼՔ» խմբակցութիւնը շրջանառութեան մէջ դրած է 2008 թուականի իրադարձութիւններու մասին Ազգային ժողովի յայտարարութեան նախագիծ, որ իրաւապահներու առջեւ պահանջ կը դնէ՝ սեղմ ժամկէտներու մէջ բացայայտել եւ խստագոյն պատասխանատուութեան կանչել Մարտ 1-ին եւ 2-ին տեղի ունեցած սպանութիւններու կազմակերպիչները եւ անմիջական կատարողները, խաղաղ ցուցարարներու դէմ ապօրինի ուժ կիրառողները, ինչպէս նաեւ վերանայիլ այս գործով դատաւարութեան ընդդիմադիրներու մեղադրական վճիռները:

«Ընդդիմադիր գործիչների, ակթիւիստների դէմ քաղաքական գործունէութեան համար քրէական հետապնդում իրականացնելու փորձը կիրառուում է մինչեւ օրս», - ըստած է «ԵԼՔ»-ի յայտարարութեան մէջ, ընդգծելով նաեւ, որ պատշաճ քննութեան չեն արժանանար ընտրութիւններու արդիւնքները կեղծելու, ընտրողներու ազատ կամքի արտայայտման իրաւունքի ոտնահարումներու մասին անգանգերը:

«ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար, Մարտի 1-ի գործով եօթ տարուաչ ազատագրկման դատաւարութեան Նիկոլ Փաշինեանի խօսքով, այնպէս ըրած են, որ գլխադասային յանձնաժողովին մէջ նախագիծը քննարկուելէ ետք յայտարարութեան թեքսթը լիազույնար նիստին պատգամաւորներու սեղանին ըլլայ տարելիցի օրերուն:

Շաւարշ Քոչարեան. «Հայաստանը Ամէն Ինչ Կ'ընէ, Որպէսզի Պահպանէ Ռազմական Հաւասարակշռութիւնը»

Հայաստանը իր հերթին ամէն ինչ կ'ընէ, որպէսզի պահպանէ ռազմական հաւասարակշռութիւնը (պալանսը), կառավարութեան նիստին ետք՝ լրագրողներու հետ ճեպագրոյցի ժամնակ ըսած է Հայաստանի արտաքին գործոց փոխ նախարար Շաւարշ Քոչարեանը, արձագանգելով լրագրողներու այն դիտարկման, թէ Ռուսաստանը կը շարունակէ գէնք մատակարարել Ատրպէյճանին:

«Հայաստանն իր հերթին ամէն ինչ անում է, որպէսզի պահպանի ռազմական պայմանադրութեան ներառեալ նաեւ օգտուելով մեր դաշնակցի՝ Ռուսաստանի, այսպէս ասած, հնարաւորութիւններն օգտագործելով, ընդ որում աւելի

Յայտարարութեան ընդունումը «ԵԼՔ» դաշինքը կը կարեւորէ՝ խաղաղ, առանց գէնքի, հաւաքներ իրականացնելու իրաւունքի արդիւնաւէտ եւ անվտանգ իրացման, հանրային համերաշխութեան վերականգնման համար:

Կ'առաջարկուի, որ Ազգային ժողովը դատաւարութեան «քաղաքացիների նկատմամբ 2008 թուականին ոստիկանութեան կողմից բիրտ եւ ապօրինի ուժի գործադրումը, ընդդիմադիրների նկատմամբ շինծու քրէական գործերի յարուցումը»: Որպէս յայտարարութեան ընդունման հիմնաւորում «ԵԼՔ»-ը կը նշէ, որ 10 սպանութիւններու կազմակերպիչները եւ անմիջական կատարողները մինչեւ օրս պատասխանատուութեան չեն կանչուած, գոհերու հարազատներուն, ինչպէս նաեւ ապօրինի ուժի գործադրման հետեւանքով մարմնական վնասուածքներ ստացածներուն արդարացի փոխատուցում չէ տրուած:

Իշխող Հանրապետականը առաջիմ չէ մեկնաբանած երէկ շրջանառութեան մէջ դրուած փաստաթուղթը: Նախորդ գումարման խորհրդարանը մերժած է Հայ ազգային քննիչի նախաձեռնութիւնները, որ կը նախատեսէր 2008-ի իրադարձութիւնները ուսումնասիրող յանձնաժողով ստեղծել, գոհերու ընտանիքներուն փոխատուցում տրամադրել: Նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի օրօք ալ Կառավարութիւնը մերժած էր՝ Մարտի 1-ը չիշատակի օր ճանչնալու ՀԱԿ-ի առաջարկը:

մատչելի գնով ստանում է համապատասխան սպառազինութիւն», - ըսած է Քոչարեան:

Վերջին տարիներուն Պաքուն Ռուսաստանէն շուրջ հինգ միլիարտ տոլարի սպառազինութիւն գնած է, այդ շարքին՝ յարձակողական:

Յունուարի 19-ին Պաքուի նաւահանգիստ հասած է ռուսական արտադրութեան ժամանակակից սպառազինութեան հերթական խմբաքանակը:

Տաւուսի մէջ «Նովոստի» գործակալութեան տուած հարցազրոյցի ժամանակ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ըսած է, որ Ռուսաստանէն գէնք գնելու հարցով Ատրպէյճանը որեւէ սահմանափակում չունի:

ԱՄՆ Դեսպանատան ուղերձը՝ «Կ'ընես Ներդրումներ, Ուրեմն Փոխէ Համակարգը»

Հայաստանի ներդրումային միջավայրի վերաբերեալ ԱՄՆ դեսպանատան հրապարակած գեղոյցին մէջ տեղ գտած գնահատականները առարկայական են եւ կ'արտացոլեն առկայ իրավիճակը: Lragir.am-ի հետ զրոյցի ժամանակ նման դիտարկում ըրած է «Թրանսփարենսի ինթըրնաշնլ» հակա-կաշառակերութեան կեդրոնի ծրագիրներու ղեկավար Վարուժան Հոկտանեանը:

Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանատունը օրերս հրապարակած է ՀՀ-ի մէջ ներդրումային իրավիճակի վերաբերեալ 2017 թուականի գեղոյցը, ուր ԱՄՆ դեսպանատան տնտեսական պատասխանատու Ռաֆայէլ Սամպրոն իր գնահատականները ներառած է: Ըստ այդմ՝ Հայաստանի մէջ դատական համակարգը կը շարունակէ անվստահելի մնալ, իսկ կաշառակերութեան դէմ պայքարը իրական արդիւնք չի տար:

Ըստ գեղոյցի, «Հայաստանի տնտեսութեան հիմնական հատուածները կը վերահսկուին փոխկապակցուած գործարարներու կողմէ, որոնք կը վաճելն իշխանութեան հովանաւորչութիւնը: Թէեւ ընդհանուր ներդրումային միջավայրը կարծես թէ կը բարելաւուի, սակայն կաշառակերութիւնը կը շարունակէ լուրջ խնդիր մնալ այսպիսի կարեւոր ոլորտներու մէջ, ինչպիսիք են դատական, հարկային ու մաքսային գործառնութիւններու, առողջութեան, կրթութեան, ռազմական եւ իրաւապահ ոլորտները»:

Վարուժան Հոկտանեանի խօսքով, այս գեղոյցով ամերիկեան կողմը Հայաստանի իշխանութիւններուն հետեւեալ ուղերձը կը յղէ՝ երկրի մէջ համակարգային փոփոխութիւններ պէտք է կատարուին, որպէսզի ներդրողները գան:

«Կաշառակերութեան դէմ պայքարի առաջին ռազմավարութիւնից սկսած հիմնականում օրնէքներ ու ենթաօրէնսդրական աքթեր են ընդունուում, որոնք են-



«Թրանսփարենսի ինթըրնաշնլ» հակակաշառակերութեան կեդրոնի ծրագիրներու ղեկավար Վարուժան Հոկտանեան

թաղրուում է, որ պէտք է կիրարկուեն: Բայց կիրարկում չի լինում: Դրա հիմնական պատճառը քաղաքական կամքի բացակայութիւնն է: Իսկ երբ մի քիչ խորանում ես, թէ ինչու չկայ քաղաքական կամք, ես այդ խնդիրը տեսնում եմ գոյութիւն ունեցող տնտեսական ու քաղաքական մոտելի մէջ: Այսինքն՝ եթէ մոտելը չի փոխուում, եթէ մենք իրականում ունենք տնտեսութեան մէջ մենաշնորհուած ոլորտներ, եւ այդ մենաշնորհումը գնաց նաեւ քաղաքականութիւն, այս պայմաններում արդէն քաղաքական կամքի դրսեւորում դժուար է ակնկալել», - ըսած է Հոկտանեանը:

Հոկտանեանի խօսքով, ամերիկեան գեղոյցին մէջ հետեւեալ ուղերձն է, որ դէպի ծով ելք չունենալու, հակամարտութեան առկայութեան, մասամբ փակ սահմաններու պայմաններուն մէջ ամբողջ յոյսը պէտք է ըլլայ շատ արդիւնաւէտ աշխատող տնտեսական համակարգը:

«Այսինքն՝ ԱՄՆ դեսպանատան «մեսիճը» սա է՝ ասում ես ներդրումներ, ուրեմն փոխի համակարգը», - աւելցուցած է ան:

Վերլուծաբան. «Արմէն Սարգսեանի Հանդիպումները Աւելի Շատ Յեւակաւ են

Իշխող Հանրապետական կուսակցութեան Հայաստանի չորրորդ նախագահի թեկնածու, Մեծ Բրիտանիոյ մէջ Հայաստանի դեսպան Արմէն Սարգսեանի սկսած հանդիպումները քաղաքական ուժերու, հանրութեան ներկայացուցիչներու հետ աւելի շատ ձեւական են, այլ ոչ թէ որոշում կայացնելու նպատակ ունին:

«Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ այսպիսի համոզմունք յայտնած է քաղաքական վերլուծաբան Արմէն Պաղտասարեանը:

«Իհարկէ, աւելի շատ ձեւական են հանդիպումները, որովհետեւ ես կասկած չունեմ, որ իրականում Արմէն Սարգսեանը իր որոշումը ունի եւ նա համաձայնուելու է: Հակառակ դէպքում, Սերժ Սարգսեանը դա ճշդելուց առաջ նրան հենց այնպէս առաջարկ չէր անի», - ընդգծած է վերլուծաբանը:

«Սկզբում միաձայն հաւանութիւն են տալիս այդ թեկնածութեանը եւ յետոյ միայն հարցեր են տալիս, լսում են նրա տեսակէտները՝ տարօրինակ է, հակառակը պիտի լինի. սկզբում պիտի լսէին նրա տեսակէտները, դիրքորոշումները, յետոյ նոր թեկնածութիւնը

առաջադրէին», - շարունակած է Պաղտասարեանը՝ եզրակացնելով. - «Այսինքն, սա, իհարկէ, ձեւական բնոյթ է կրում, նպատակը տպաւորութիւն թողնելն է, որ սա համազգային թեկնածութիւն է, ազգային միայնարութեան (քննստլիտացիայի) ինչ-որ արտայայտութիւն է»:

Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութեան ղեկավար Վահրամ Պաղտասարեանի յայտարարութեան առնչութեամբ, որ «Ծառուկեան» խմբակցութեան հետ բանակցութիւնները Արմէն Սարգսեանը պէտք է վարէ, վերլուծաբանը ըսած է. - «Քանի որ խօսակցութիւններ կային, թէ «Ծառուկեան» դաշինքը կողմ քուէարկելու դիմաց ակնկալում է նախարարական պաշտօններ, Վահրամ Պաղտասարեանը սրանով ուղերձ է յղում, որ այդպիսի բանակցութիւններ չկան, իրականում նման բան չկայ, դրա համար էլ ոչ թէ ՀՀԿ-ն պիտի բանակցի «Ծառուկեան» դաշինքի հետ, այլ՝ հենց թեկնածուն: Սա էր ուղերձը»:

«Իսկ թէ ինչ կը լինի, ես կարծում եմ՝ ամէն դէպքում, Արմէն Սարգսեանը կ'անցնի առաջին փուլով», - կանխատեսած է Արմէն Պաղտասարեանը:

# ԼՈՒՐԵՐ

## ԱՄՆ Տնտեսութեան Նախարարութեան Ցուցակին Վրայ Երեք Հայ Գործարարներ



Ամերիկեան ցանկին վրայ յայտնուած հայ գործարարներ՝ Սամուէլ Կարապետեանը, Տանիլ Խաչատուրով եւ Սերկէյ Կալիցքի

Միացեալ Նահանգներու Տնտեսութեան նախարարութիւնը ի վերջոյ հրապարակած է ուսաստանցի բարձրաստիճան պաշտօնեաներու ու նախագահ փութինի մերձաւոր «օլիգարխներու» ցանկը, որոնք յառաջիկային կրնան յայտնուիլ ամերիկեան պատժամիջոցներու տակ:

Քոնկրէտ ուղարկուած ցուցակին մէջ քրեմլինի ամբողջ վերնախաւն է, այդ շարքին՝ ուսաստանաբնակ հայ գործարարներ Սամուէլ Կարապետեանը, Տանիլ Խաչատուրով եւ Սերկէյ Կալիցքին (Յարութիւնեան):

«Քրեմլեան գեկոյց» կոչուող փաստաթուղթին մէջ ընդհանուր առմամբ 210 անուն կայ՝ Փութինի աշխատակազմի ղեկավար Անտոն Վաչոն, մամլոյ խօսնակ Տմիթրի Փեսքովը, օգնական Վլատիսլաւ Սուրքովը, վարչապետ Տմիթրի Մետվետեւը՝ 8 փոխվարչապետներու եւ 22 նախարարներու հետ, պետական «Ռոսնեֆթ»-ի ու «Կազփրոմ»-ի ղեկավարները՝ Իկոր Սեչինն ու Ալեքսէյ Միլլերը:

Ուաշինկթընի մէջ չեն մոռացած նաեւ օրէնսդիրներուն եւ ուժայիններուն, Յանկին մէջն են Ռուսաստանի խորհրդարանի երկու պալատներու խօսնակները, ներքին հետախուզական ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշկինը, Անվ-

տանդութեան դաշնային ծառայութեան ղեկավար Ալեքսանտր Պորթնիկովը, զինուած ուժերու գլխաւոր շտապի պետ Վալերի Կերասիմովն ու գլխաւոր դատախազ Եուրի Չաչկան:

7-էջանոց ցանկին մէջ են նաեւ Ռուսաստանի ամենահարուստ գործարարները՝ Ռոման Ապրամովիչը, Օլեկ Տերիփասկան, Եուրի Քոչվալչուկը, Ելէնա Պաթուրինան եւ ուրիշներ, որոնք, ըստ գեկոյցի, իրենց կարողութիւնը վաստակած են նախագահ փութինի հետ կապերու միջոցաւ:

Միացեալ Նահանգներու Տնտեսութեան նախարարութիւնը պարտաւորուած էր այս գեկոյցը Քոնկրէտ ուղարկել նախագահ Տոնալտ Թրամփի կողմէ անցած տարուայ Օգոստոսին ստորագրուած օրէնքով, որու համաձայն կը նախատեսուի խտացնել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները՝ ամերիկեան վերջին ընտրութիւններուն միջամտելու եւ Ուքրանիոյ մէջ իրավիճակը ապակայունացնելու համար: Ընդ որում, ըստ օրէնքի, վարչակազմը պէտք է ոչ միայն առանձնացնէր Փութինի մերձաւորներն ու իշխանութեան առանցքային դէմքերը, այլեւ մանրամասն Քոնկրէտին տեղեկացնէր, թէ անոնցմէ իւրաքանչիւրի նկատմամբ սահմանափակումը ինչ հետեւանքներ կրնար ունենալ:

## Էրտողան Չեղեալ Յայտարարած Է Լատինական Ամերիկա Իր Նախատեսուած Այցը

Թուրքիոյ նախագահ Էրտողան չեղեալ յայտարարած է Լատինական Ամերիկա նախատեսուած այցելութիւնը: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնբրէս»-ը, այս մասին կը յայտնէ թրքական «Հիւրրիյէթ» պարբերականը:

Փետրուարի 5-ին Էրտողան պէտք է այցելէր վատիկան եւ Իտալիա, այնուհետեւ Պրագիլ, Ու-

րուկուէյ եւ Վենեզուելա: Սակայն Թուրքիոյ նախագահականէն յայտարարութիւն հրապարակուած է, ուր նշուած է, թէ նախագահի արտերկրեայ այցը պիտի սահմանափակուի միայն վատիկանով եւ Իտալիայով:

Թէ ինչն է Լատինական Ամերիկա այցը չեղարկելու պատճառը, դեռ յայտնի չէ:

## Արա Գոչունեան.- Հայաստանի եւ Թուրքիոյ Միջեւ Յարաբերութիւններու Կարգաւորման Պահը Դեռ Հասունցած չէ

Արձանագրութիւնները ուժի մէջ մնան, թէ ոչ, գործնականօրէն ոչ մէկ տարբերութիւն չկայ. լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այսպէս ըսած է Պոլսոյ մէջ հրատարակուող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունեանը, անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւններուն եւ ԵՆՆՎ-ի մէջ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին թուրք պատուիրակի կողմէ տրուած հարցին:

«Միւս կողմէն, բնականաբար, միջպետական իրաւունքի տեսակէտէն այդ փաստաթուղթի ուժի մէջ ըլլալը իր իմաստը

ունի: Բայց երեւանի նախաձեռնութիւնը կարելի չէ ստորագրուել, եւ այդ հանգամանքը վերահաստատուեցաւ երէկ Սթրասպուրկի մէջ հանրապետութեան նախագահի շատ դիպուկ բանաձեւմամբ, որ աւելի մեծ ներուժ ունեցող երկիրները պէտք է ուժի դիրքերէ խօսին աւելի քիչ ներուժ ունեցողներու հետ», - նշած է ան:

Արա Գոչունեանը նկատած է նաեւ, որ փաստը կը մնայ փաստ, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման պահը դեռ հասունցած չէ:

«Այժմեան տուեալներով՝ այդ

## Հրանդ Տինքի Ընկերները Հերթական Դատական Նիստէն Առաջ Կրկին Ցոյց Կազմակերպած Են



Հրանդի համար, արդարութեան համար» պաստառով ցոյց Պոլսոյ դատարանին առջեւ

Հրանդ Տինքի սպանութեան գործով շարունակուող հերթական դատական նիստէն առաջ Պոլսոյ ծանր լանցագործութիւններու գործերով 14-րդ դատարանի առջեւ ցոյց իրականացուցած են Հրանդի ընկերները:

Ինչպէս կը տեղեկացնէ հայկական «Ակօս»-ը, դատարանի դիմաց հաւաքուածները պահանջած են ամբողջովին բացառուել մեղա-

ւորները: «Մենք եկած ենք այստեղ, որ ըսենք. «սպաննէ» ըսողները թող դատուին, եւ մարդասպաններուն պաշտպանողները ալ լանցակից են», - յայտարարած են Հրանդի ընկերները:

Նշենք, որ այս շաբաթ Տինքի սպանութեան գործով դատական նիստերուն պիտի հարցաքննուին Տրապիզոնի ոստիկան զօրաց հրամանատարութեան պաշտօնեաները:

## Իտալական Ստիկանութենէն Վատահեցուցած Են, Որ Փաշինեանի Հետ Կապուած Խնդիր Չկայ

Իտալական ոստիկանութեան մէջ Հայաստանի դեսպանատան վստահեցուցած են, որ Աժ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանի հետ կապուած խնդիր այլեւս չկայ, «Ազատութեան» փոխանցած է Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Տիգրան Բալայեանը:



Նիկոլ Փաշինեան իտալացի ոստիկաններուն հետ

«Ֆէյսպուքի» իր էջին գրած էր, որ Հոռոմի մէջ ոստիկանները պաշարած են հիւրանոցի իր համարը եւ փորձած են ձերբակալել իրեն: Ան նաեւ լուսանկար տեղադրած է, ուր չորս ոստիկաններ շրջապատած են իրեն: Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան «Ազատութեան» տեղեկացուցած են, որ այժմ կը փորձեն կապ հաստատել պատգամաւորին հետ:

Փաշինեան «Ֆէյսպուք»-ի մէջ գրած է. - «Պարզուած է՝ ՀՀ իշխանութիւնները ինձրփոխով փնտռում են ինձ: 2008 թուականից փնտռում-փնտռում ու չեն գտնում»:

Յիշեցնենք, որ 2008 թուականի յետընտրական իրադարձութիւններէն ետք Նիկոլ Փաշինեանը հետախուզման մէջ էր, յաջորդ տարուայ Յուլիսին ան ներկայացած էր Հայաստանի իրաւապահ մարմիններուն, 2010-ի յունուարին՝ դատաւարտուած 7 տարուայ ազատազրկման, 2011-ի Մալթային՝ համաներմամբ՝ ազատ արձակ-

ուած:

Միջադէպին արձագանգած է Հայաստանի ոստիկանութիւնը: Հակադարձելով Փաշինեանին՝ իրաւապահները պնդած են, որ 2009 թուականի Յուլիսին անոր նկատմամբ հետախուզումը դադարեցուած է: Այդ մասին, ըստ ոստիկանութեան, տեղեկացուած է ինձրփոխի Գլխաւոր քարտուղարութեան, ապա՝ Գլխաւոր քարտուղարութեան կողմէ տեղեկացուած են բոլոր անդամ պետութիւնները:

Ոստիկանութեան լրատուական վարչութեան պետ Աշոտ Ահարոնեանը «Ազատութեան» ըսած է, որ ինչիւրը Իտալական ոստիկանութեան մօտ եղած է, հաւանաբար անոնք չեն թարմացուցած հետախուզող անձերու տուեալները:

«Ելք» խմբակցութեան անդամ, պատգամաւոր Էտմոն Մարտիանի ըսած է, որ մանրամասններու մասին տեղեկ չէ, բայց կը կարծէ, որ սա ինչ-որ մէկուն աշխատանքի մէջ թերանալու արդիւնք է:

պահանջ մենք հեռու ենք: Անոնք, որոնք կ'ուզեն այդ պահը տեսնել, հիմա դեռ պէտք է բաւարարուին բարեմաղթանքներով, որ վերջա-

պէս այդ պահը հասունայ, եւ մենք հասնինք բարիդրացիական, նորմալ, համագործակցական յարաբերութիւններու», - նշած է ան:

# ՍԴՅԿ Հայաստանի Կազմակերպութեան 11-րդ Համագումարի Յայտարարութիւնը

Սոցիալ Դեմոկրատ Հանրապետական կուսակցութեան Հայաստանի կազմակերպութեան 11-րդ համագումարի աշխատանքներն աւարտուեցին յունուարի 28-ին:



11-րդ համագումարը Հայաստանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումների վերաբերեալ տուեց իր գնահատականները:

Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան սոցիալապէս անապահով հատուածն ունի կուսակցութեան գործնական անջակցութեան կարիքը, որը դրսևորուելու է քաղաքական բոլոր հնարաւոր հարթակներում եւ շարունակելու է մնալ Կուսակցութեան գործունէութեան առանցքային թիրախը:

Հասարակութեան կարեւորագոյն ու առաւելապէս խոցելի հատուածը աշխատաւոր մարդն է: Համագումարը գտաւ, որ ՍԴՅԿ պէտք է շարունակի իր ուշադրութեան կեդրոնում պահել ու գործնական քայլեր կիրառել՝ աշխատաւոր մարդու իրաւունքները պաշտպանելու եւ եղած աղաղակող խախտումներին հանրային հնչեղութիւն ապահովելու համար:

Օրէնքի լիակատար հաւասարութիւնը երկրում անվտանգութեան գլխաւոր երաշխիքն է: Ուստի համագումարը կարեւոր է համարում համահայկական ջանքերի գործադրումը երկրում առկայ արատաւոր երեւոյթների արմատախիլ անելու հարցում:

Արտագաղթը Հանրապետական կուսակցութիւնը համարում է երկրի առջեւ ծառայած կարեւորագոյն մարտահրաւեր: Այն վերածուել է ազգային աղէտի, որը կասեցնելու համար անհրաժեշտ է գործնական քայլեր, աշխատատեղերի ապահովում եւ քաղաքացիների՝ ՀՀ-ում ապրելու արժանապատիւ պայմաններ:

Համագումարը գտաւ, որ Արցախի հիմնախնդիրը հայ ժողովրդի եւ կուսակցութեան համար մնում է առանցքային, սկզբունքային խնդիր: Կուսակցութիւնը կանգնած է Արցախի ժողովրդի ազատ կամարտայայտման կողքին եւ անվերապահ սատարում է Հայաստանի եւ Արցախի Ձիւնուած ուժերին: Խաղաղ ժամանակ հնչակեանք քաղաքացի է, պատերազմական դրութեան ժամանակ հայոց բանակի զինուոր:

Համագումարը գտնում է, որ երիտասարդութիւնը երկրի շարժիչ ուժն է, ուստի անհրաժեշտ է յստակ երիտասարդութեանը նուիրուած քաղաքական գծի ամրապնդում, ծրագրերի իրականացում:

Երկրի ընդերքը համաժողովրդական հարստութիւնն է, ուստի համագումարը ապագայ վարչութեանը յանձնարարում է ձեւաւորել ու կազմակերպել ընդերքի ճիշդ շահագործման հայեցակարգ:

Յառաջիկայ ներքին քաղաքական զարգացումների մասին ՍԴՅԿ Հայաստանի նորընտիր վարչութիւնը իր ժամանակին հանդէս կգայ յաւելեալ յայտարարութեամբ:

Յունուարի 28-ին Սոցիալ Դեմոկրատ Հանրապետական կուսակցութեան Հայաստանի նորընտիր վարչութիւնը՝ բաղկացած 9 ընկերներից, գումարեց իր անդրամիկ միտքը եւ կատարեց հետեւեալ դիւանային բաժանումները:

- Սեդրակ Աճեմեան - ատենապետ
- Արմէն Մկրտչեան - քաղաքական խորհրդի ղեկավար
- Վազգէն Մետրոպեան - փոխատենապետ
- Արտաւազ Սարգսեան - ատենադպիր
- Յարութիւն Պալապանեան - գանձապահ
- Դաւիթ Խոսրովեան - ներքին դիւանի պատասխանատու
- Գագիկ Մելիքեան - խորհրդական
- Արսէն Կուպէեան - խորհրդական
- Յովհաննէս Տէրտէրեան - խորհրդական
- Բացի դիւանային բաժանումներից, ՍԴՅԿ Հայաստանի վարչութեան որոշմամբ Աշոտ Գրիգորեանը նշանակուել է ՍԴՅԿ Մեծն Սուրբատ երիտասարդական ուսանողական միութեան ատենապետ, իսկ Գեղամ Յարութիւնեանը՝ արտաքին յարաբերութիւնների դիւանի պատասխանատու:

## ՍԴՅԿ Հայաստանի կազմակերպութեան մամուլի դիւան

### «Ղարաբաղեան Հակամարտութեան Փաթեթային Հանգուցալուծումը

Շարունակուած էջ 1-էն

ներառեալ նաեւ ամենաբարձր՝ նախագահների մակարդակով, եռանախագահող երկրների կողմից: Բայց, իհարկէ, մենք պէտք է նկատի ունենանք, եւ դրա մասին էլ մենք բազմիցս նշել ենք, որ փաթեթային հանգուցալուծումը, բնականաբար, նկատի ունի նաեւ փուլային կիրառում այդ փաթեթային հանգուցալուծման», - ըսած է Նալպանտեանը:

Ըստ Հայաստանի Արտաքին գործոց նախարարի, Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարին հետ Լեհաստանի Քրաքով քաղաքին մօտ տասը օր առաջ կայացած հանդիպումն

ման մէջ քայլ առաջընթաց գրանցուած է՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ ԱնՉճէյ Քասպիշիկի գրասենեակի կարողութիւններու ընդլայնման ուղղութեամբ:

**Գնդակը Թուրքիայի Դարպասում է**

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը անդրադարձած է նաեւ հայ-թրքական արձանագրութիւններուն:

«Տասը տարի առաջ, երբ որ Հայաստանը նախաձեռնեց այս կարգաւորման գործընթացը, տասը տարուայ ընթացքում միշտ հաւա-

# Լեռնային Ղարաբաղի Ձիւնուծը Ետ Շարտած է Ատրպէյճանական Երթափանցման Փորձ

25 Յունուարի գիշերը, ժամը 2-ի սահմաններուն, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի զօրքերու շփման գիծին ատրպէյճանական զինուժի կողմէ ներթափանցման փորձի հետեւանքով դարաբաղեան կողմը կորուստներ եւ վիրաւորներ չունի: Այս մասին «Ազատութեան» ըսած է Լեռնային Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Պապայեանը:

«Իրավիճակը կայուն է եւ լրիւ վերահսկուած է Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակի կողմից: Այս պահի դրութեամբ որեւէ այլ արտառոց դէպք տեղի չի ունեցել», - նշած է ղարաբաղցի պաշտօնեան:

Պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի հակամարտ զօրքերու շփման գիծի հարաւարեւելեան, մասնաւորապէս, կուրուպատկիւնի ուղղութեամբ տեղակայուած հայկական դիրքերէն մէկուն պաշտպանական հատուածին ԼՂ պաշտպանութեան բանակի առաջապահ ուժերու կողմէ «հաստանշուած է ատրպէյճանական հետախուզական խումբի ներթափանցման փորձ»: Հաղորդագրութեան համաձայն՝ ձեռնարկուած կանխարգելիչ գործողութիւններու արդիւնքով ատրպէյճանական ջատուկ ջոկատայինները ետ շարտուած են:

ԼՂ ՊԲ-ն հաղորդած է նաեւ, որ նախնական տուեալներով՝ հակառակորդի կողմէ կան կորուստներ: Ըստ ատրպէյճանական APA լրատուական գործակալութեան, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը, իր հերթին, հերքած է ղարաբաղեան կողմի պնդումները՝ փստահեցնելով, թէ ատրպէյճանական բանակը ամբողջովին կը պահպանէ հրադադարն ու որեւէ կորուստ չունի:

«Ազատութեան» հետ զրոյցի

ժամանակ Դաւիթ Պապայեանը նաեւ հետեւեալ դիտարկումը ըրած է, որ միջազգային հարթակներու վրայ հակամարտութեան կողմերու համար կազմակերպուող ամէն հանդիպումէ ետք Ատրպէյճանի իշխանութիւնները նման քայլի կը դիմեն: Պապայեանը չի շատակած է նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի երէկ ունեցած ելոյթը Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանին: Սարգսեանը պատասխանելով ատրպէյճանցի պատգամաւորի հարցին՝ ըսած էր. «Դուք ուզում էք Ատրպէյճանի կազմ վերադարձնել Ղարաբաղը: Ցաւօք սրտի, այլատեսացութիւնն Ատրպէյճանում այնքան է զարգացել, որ արդէն դուք բացառապէս յայտարարում էք, որ Ղարաբաղը ձեզ պէտք է առանց հայերի, անհնար է, դա երբեք չի լինելու»:

«Ուրեմն նոր եղել է Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարների քրաքովեան հանդիպումը, համանախագահների միջնորդութեամբ, այնուհետեւ Հայաստանի նախագահը հանդէս եկաւ կարեւոր մի ելոյթով եւրոպական հարթակներից մէկում: Բացի դրանից՝ ներկայ դրութեամբ Ստեփանակերտում է գտնուում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ ղեկավար ԱնՉէյ Քասպիշիկը: Հիմա այս ամէնի ներքոյ ատրպէյճանական կողմը դիմում է այսպիսի աննորմալ քայլի, ինչի՞ համար, որեւէ տրամաբանութիւն չկայ», - շարունակած է Դաւիթ Պապայեանը:

Պապայեանը ահաբեկչութիւն որակած է Ատրպէյճանի գործողութիւնները, պնդելով, որ ատրպէյճանական ժողովուրդը իրենց թշնամին չէ, իրենք հրադադարի հաստատումէն ետք ալ կը փորձեն Ատրպէյճանի հետ գոյատեւել որպէս հարեւաններ:

տարիմ է եղել, թէ՛ գործընթացին, թէ՛ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններին: Հայաստանը չէ, թուրքիան է, որ հրաժարուեց իրականացնել ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը», - ըսած է Հայաստանի արտաքին գերատեսչութեան ղեկավարը, շարունակելով. - «Վերջին տարիներին միջազգային հանրութիւնն ասում էր, որ գնդակը գտնուում է թուրքիայի կիսադաշտում, բայց այսօր կարող ենք ասել, որ գնդակը գտնուում է թուրքիայի դարպասում»:

Նալպանտեանը «կարեւոր հանգրուան» անուանած է Հայաստանի ու Եւրոմիութեան միջեւ անցած տարուայ նոյնմբերին ստորագրուած Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը:

«Այսօր մենք կեդրոնանում ենք այս կարեւոր, շրջանակային փաստաթղթի վաւերացման գործընթացի վրայ: Հայաստանը յայտարարել է, որ քայլեր է ձեռնարկում, որ այս փաստաթուղթը վաւերացուի մինչեւ ապրիլ: Բայց մենք մէկ քայլ առաջ ենք նայում, իհարկէ յոյսով ենք, որ առանց որեւէ խոչընդոտների կը վաւերացուեն նաեւ այլ եւրոպական միութիւնների կողմից, բայց համապատասխան ընթացակարգի, Եւրոմիութեան կողմից արդէն դրա մասին նաեւ իրենց կայքէջում է դրուած, որ մեր վաւերացումից յետոյ կարող է ժամանակաւոր սկսել իրականացումը այս պայմանագրի: Հնարաւոր է, որ դա լինի մայիսի 1-ից սկսած, կամ յուլիսի 1-ից», - ըսած է Արտաքին գործոց նախարարը:

NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com

# Երեւանի Մէջ Մեծ Շուքով Նշուեցաւ ՄԴՀԿ 130-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

հերոսամարտերի մէկդարեայ յորելեանը՝ որպէս հայ ժողովրդի ազատատենչ ոգու յաղթանակի խորհրդանիշ, Հայաստանի հետագայ վերելքի եւ հզօրանալու գրաւական: Վստահ եմ, յատկապէս սփիւռքում դուք կը դառնաք յորելեանական տօնակատարութիւնների ջահակիրները: Կրկին շնորհաւորում եմ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անդամներին, համակիր-

յեղափոխութիւն եւ ընկերվարութիւն, այնուհետեւ ձերբակալուեց ու թուրքերի կողմից կախաղան հանուեց: Խօսքն այդ ժիրայրի մասին է, ում պատուին հայրս իմ անունը ժիրայր է դրել: Սակայն ես յետոյ հոգեւորական դարձայ, իմ անունը դարձաւ Ռսկան: Ո՞ր մէկն եմ ես՝ ժիրայրը, թէ՞ Ռսկանը: Եթէ Ռսկանն եմ, հոգեւորական եմ, իմ առաջին պարտաւորութիւնը Աստծոյ եւ եկեղեցու նկատմամբ է: Եթէ ժիրայրն եմ, իմ առաջին պարտաւորութիւնը հայրենիքի եւ

եւ 20-րդ դարի սկզբին Հայաստանի հարեւան երկրների մեծ մասում գործող ձախակողմեան կուսակցութիւնների 90 տոկոսը իրենց առաջին քայլերն են արել Հնչակեան կուսակցութեան այդ օրերի գործիչների գաղափարական համոզմունքներից դրդուած: Աւելին՝ Օսմանեան կայսրութեան եւ ժամանակակից թուրքիայի մէջ առաջին անգամ ընդհանրապէս ազգային-ընկերվարական հայեացքներ է քարոզել հենց մայր կուսակցութիւնը, որի լաւագոյն



մեղքն է: Կուսակցութեան Հայաստանի կազմակերպութեան յաջորդ վարչութիւնը, որը կը ձեւաւորուի



ներին կուսակցութեան հիմնադրման 130-ամեակի առթիւ եւ մաղթում եմ նորանոր յաջողութիւններ եւ ձեռքբերումներ՝ յանուն մեր ազգային իղձերի եւ նպատակների իրականացման, յանուն հզօր Հայաստանի, հայ ժողովրդի բարօրութեան, հայրենադարձութեան եւ ազգային միասնութեան»: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աւագ միաբան, Տէր Ռսկան արքեպիսկոպոս Գալփաքեան իր խօսքին մէջ շեշտեց, որ չէր կարող իր մասնակցութիւնը չբերել ՄԴՀԿ 130-ամեակին նուիրուած միջոցաւմանը, քանի որ այդպիսով կը դաւաճանէր իր հօրը: «Հայրս 1907թ. դարձել է Հնչակեան

հայրենիքի ազատագրման համար է», - ընդգծեց Տէր Ռսկան արքեպիսկոպոս Գալփաքեան: Աւելցնելով ան ըսաւ, որ ՄԴՀԿ-ն կը շարունակէ մնալ յեղափոխական, ազգային, գերագոյն շահերի պաշտպանութեան կուսակցութիւն: «Ինձ համար Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը կայ եւ մնում է ժողովրդի սոցիալական շահերի պաշտպանութեան եւ արդարութեան կուսակցութիւն», - եզրափակեց Տէր Ռսկան Սրբազանը: ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Ընկ. Նարեկ Գալստեանն իր ելույթին մէջ ընդգծեց, որ հայ ժողովուրդի

զաւակներից Փարամազի նկարը կախուած է բոլոր առաջադէմ թուրք, քուրդ, ասորի եւ թուրքիայի հայկական համայնքի մտաւորականների գրասենեակներում՝ իբրեւ նոր խօսքի, ազատ ու հաւասար միջավայրում ապրելու գաղափարախօսութեան հիմնադիր», - ըսաւ Ընկ. Գալստեան: Նարեկ Գալստեան շեշտեց, որ

առաջիկայ փակ աշխատանքային խորհրդակցութիւններից յետոյ, մեծ առաքելութիւն ունի՝ ներկայացուել Հայաստանի ամենահեռաւոր գիւղերում, քարոզել մեր գաղափարները, արդար ու ուժեղ պետութիւն ունենալու մեր տեսլականը», - նշեց Ընկ. Գալստեան՝ շեշտելով, որ յառաջիկայ երկու տարիները կուսակցութեան երեքմի



կուսակցութեան անդամ: Երկու եղբայրներին կոչել են իրենց մեծ հօրեղբայրների անուններով, սակայն, երբ ես եմ ծնուել, անունս դրել են ժիրայր: Մի օր՝ մինչ իր մահանալը, հարցրեցի՝ հայրիկ, ինչի՞ համար իմ անունը ժիրայր դրեցիր: Նա պատասխանեց, որ իր համար հայ ժողովրդի եւ Հնչակեան կուսակցութեան պատմութեան մէջ ժիրայրի նման վեհ մարդ չկայ: Դուք բոլորդ պէտք է իմանաք, եթէ չէք իմացել, չեմ կարող ձեզ պատմել ժիրայրի պատմութիւնը, Հնչակեան ժիրայրի պատմութիւնը, ով ծպտուած՝ որպէս հոգեւորական, 19-րդ դարի վերջերին քարոզեց

անդաւաճան գաւակ, տասնեակ տարիներու ընթացքին իր լաւագոյն ընկերներուն հայրենիքի համար մղուող պայքարի զոհասեղանին նուիրած, մեր իրականութեան առաջին՝ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը բոլորեց 130-րդ տարին: «Հնչակեան կուսակցութիւնը ոչ միայն աշխարհի ամենահին քաղաքական կազմակերպութիւններից է, որից առանց բացառութեան սերում են հայ եւ օտար բազմաթիւ կուսակցութիւններ եւ քաղաքական միութիւններ: Վստահաբար կարելի է փաստել, որ 19-րդ դարի վերջին

Հնչակեան կուսակցութիւնը հայ ժողովրդի անբաժան մասն է, որ անկախ ներքին քաղաքական բազմաթիւ տարածաշրջաններէն եւ օրուայ իրավիճակներէն, երբեք չէ զլացած մէկ կողմ դնել ցանկացած ներքին հարց եւ անմնացօրէ նուիրուել հայրենիքի պաշտպանութեան: «Հնչակեան կուսակցութիւնը սոցիալական արդարութեանը հաւատացող, վայրի կապիտալիզմին, մարդու կողմից մարդու շահագործմանը վճռական դէմ ազգային-ընկերվարական կազմակերպութիւն է եւ երբեք ու ոչ մի քայլ հետ չի դրել ու հետ չի դնելու իր համոզմունքներից: Փաստ է, որ հայկական ամենահին կուսակցութեան գաղափարները այնքան էլ ծանօթ չեն Հայաստանի քաղաքացիներին: Եթէ մեզ չեն ճանաչում կամ ճանաչում են եւ չեն վստահում, ապա այստեղ միայն ու միայն մեր

ունեցած փառքը վերականգնելու ու քաղաքական ազդու կազմակերպութեան վերածուելու ժամանակ պէտք է դառնայ: Ան վստահութիւն չայտնեց, որ որքան ալ հպարտանան իրենց մաքրամաքուր պատմութեամբ, մայր կուսակցութիւնը դեռ չի հնչեցրել հայ ժողովրդի պատմութեան մէջ իր ամենակարեւոր խօսքը: «Ուրեմն այլեւս պէտք է կրենք այդ պատմական առաքելութիւնը, որը մեզ վրայ է դրուել սերունդների կողմից», - եզրափակեց ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամը: Միջոցաւման աւարտին ցուցադրուեցաւ կուսակցութեան 130-ամեայ ուղին ներկայացնող կարճ տեսաֆիլմ: Այնուհետեւ ելույթ ունեցան «Արեգ» պարախումբը եւ յեղափոխական երգերով երգիչ Յարութիւն Մուրատեանը:

# ՍԱՐՖ-ը \$175,000 ԱՄՆ Տոլար կը Տրամադրէ Զալէայի Գործատեղիներու Վերականգնումին Ի Նպաստ

Վերջին շրջանին, որոշ չափով Սուրիոյ Մայր գաղութի խաղաղութեան բարի լուրերը կը տարածուին համայն հայութեան աօրեայն ներս, երբ անցնող վեց տարիներուն սուրիահայ մեր հայրենակիցներու կեանքէն ներս, դաժան պատերազմի հետեւանքով, ունեցանք բազմաթիւ որբեւայրի, հաշմանդամ եւ կորուսեալ անհատներով լի ընտանիքներ. գուգահեռ կիսակործան ու քանդուած կայուածներ, բնակարաններ, դպրոցներ, ակումբներ, կեդրոններ եւ գործատեղիներ եւ աւելին, երկիրն ու հայկական թաղամասերը պաշտպանող՝ երիտասարդ Հայ անգին զոհեր...:



Իոյ պատերազմին անցնող վեց տարիներու ընթացքին, մեծահոգի ու առատաձեռն նուիրատուութեամբ օժանդակելու՝ Սուրիահայ մեր հայրենակիցներու գոյատեւման միշտ հաւատալով, որ «ո՛չ մէկ Հայ անհատ պիտի մնայ անտէր ու անօգնական»:

Առ ի տեղեկութիւն մեր գաղութի հայրենակիցներուն, որ վերջին շրջանին ՍԱՐՖի միջոցաւ նիւթաբարոյական օժանդակութիւնը՝ Սուրիոյ ՇՏԱՊի եւ Վերականգնումի մարմինն փոխանցած է՝ \$175,000 (Հարիւր եւ Եօթնասուս Հինգ Հազար) ԱՄՆ տոլարի կոկիկ գումար մը, որ զլիսաւորաբար պիտի օգտագործուի՝ գործատեղիներու եւ կրթական անմիջական կարիքներու բարեկարգման:

Վարձքը կատար՝ ՍԱՐՖի գործունէութիւնը վառ պահելու նպատող բարերար մեր հայրենակիցներու ազնիւ նուիրատուութեան եւ օժանդակութեան համար:

Միասնական ջանքերով պիտի վերականգնենք Սուրիահայ Մայր գաղութը: ՍԱՐՖի Վերականգնումի Մարմին

# Գալիֆորնիայի Գրողներու Միութեան Յուշ-Երեկոն Նուիրուած Զայազէտ Յակոբ Անասեանի (Մահուան 30-ամեակին առիթով)

Իր տեսակին մէջ եզակի երեկոյ մըն էր նուիրուած մեծանուն գիտնական, պատմաբան, հայագէտ եւ մատենագէտի Յակոբ Անասեանի, որ տեղի ունեցաւ անցեալ Կիրակի, 28 Յունուար, 2018, Կլենտէյլի Երիտասարդաց Կեդրոնի սրահին մէջ:

Անուանի մատենագէտ մահուան 30-ամեակին նուիրուած սոյն միջոցառումին ներկայ էր գրողներու, մտաւորականութեան, հայ մամուլի եւ գրասէր հասարակութեան ներկայացուցիչներու ընտրանի խումբ մը:

Ձեռնարկի կազմակերպիչ Գալիֆորնիայի Գրողներու Միութեան անունով վարչութեան ատենապետ Ժանօթ Երաժիշտ Հենրիկ Անասեան, իր ողջոյնի խօսքէն ետք նշեց որ այս նոյն օրը նաեւ կը գուգադիպէր Հայաստանի Հանրապետութեան Բանակի կազմաւորման 26րդ տարեդարձին հետ: Ուստի հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոռնկայս լուծեամբ յարգել մեր քաջարի բանակի հերոս նահատակը: Այս առթիւ յատուկ աղօթք արտասանեց Արժ. Դոկտ. Տ. Զաւէն Քհնյ. Արզումանեան:

Օրուան հանդիսավար Յարութ Ծոտուլեան, իր բացման խօսքին մէջ ոգեկոչեց հայ մատենագիտութեան մեծ ուսման կրթական Յակոբ Անասեանի յիշատակը, որուն ձգտած հարուստ ժառանգութիւնն իր ուրոյն տեղն ունի մեր հայագիտութեան պատմութեան մէջ:

Յակոբ Անասեանի կեանքն ու գործը հանգամանօրէն ներկայացուց Երեւանի պետական համալսարանի նախկին դասախօս՝ Արմենակ Սաչաւորեանը: Ան ամփոփ գիծերու մէջ անդրադարձաւ մեծանուն գիտնականի կեանքին եւ ստեղծագործութիւններու տարբեր հանգրուաններուն բերած նպաստին հայ ժողովուրդի պատմութեան, հայագիտութեան եւ մատենագիտութեան մէջ: Առանձնապէս յիշեց իր տասնեակ մը հատորները, մասնաւորաբար՝ «Գիտական աղբիւրները Բիւզանդիայի անկման մասին», «17րդ դարի լեհ-թուրք յարաբերութիւնները», վարդան Այգեկցու «Արմատ Հաւատոյ» երկը եւ այլ շահեկան գործերը: 1984ին մեծ շուքով նշուած է Յակոբ Անասեանի յօբելեանը եւ

իրեն շնորհուած պատուոյ դոկտորի տիտղոսը:

Դոկտ. փրոֆ. Արտեմ Սարգիսեան իր սրտի խօսքին մէջ Յակոբ Անասեանը նմանցուց ուրիշ մեծութեան մը՝ Հրաչեա Աճառեանի հետ: Երկուքն ալ իրենց վիթխարի ներդրումն ունին եւ տիրակալները հայ մատենագիտութեան:

The Armenian Observer շաբաթաթերթի տէր եւ տնօրէն Օշին Քէշիշեան, իւրաքանչեւ հիւմորով, հետաքրքրական դրուագներ պատմեց Յակոբ Անասեանի մասին եւ եզրակացուց «Հայ Մշակույթի եւ Քաղաքակրթութեան պատմութեան մէջ անասման վաստակ ունի իր բերած նորութիւններով»:

Յուցադրուեցաւ Յակոբ Անասեանի կեանքին նուիրուած տեսաբերից մը:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Ելուցներով հանդէս եկան սիրուած արուեստագէտներ՝ Արմէն Անասեան (Չուլթակ) «Սիփան» երգչախումբի մենակատարներ՝ Մարիամ Արամեան, դաշնամուրի վրայ փրոֆ. Լեւոն Աբրահամեան եւ Հերմինէ Ամիրեան: Իսկ Յակոբ Անասեանի բանաստեղծութիւններէն հատուածներ կարդաց Յարութիւն Ծոտուլեան:

Աւարտին հանդէս եկաւ Յակոբ Անասեանի որդին՝ մաեսթրօ Հենրիկ Անասեան: Ան հետաքրքրական պատմումներ կատարեց իր վաստակաշատ հօր կեանքի եւ ապրելաձեւի մասին: Օրինակ՝ որպէս մարդ թատրոն չէ գացած, զայն համարելով «ժամանակի կորուստ»...: Եղած է ինքնուրոյն, ունեցած է իր աշխարհը՝ գիտութիւնը: Իր սրտի գաղտնիքը երբեք չէ յայտնած ուրիշներուն...:

Ընտանիքի ն եւ Գրողներու Միութեան անունով Հենրիկ Անասեան իր խորին շնորհակալութիւնները յայտնեց օրուան յուշահանդէսի յայտագրի մասնակիցներուն եւ գրասէր հասարակութեան: Ապա ներկաներուն բաժնուեցաւ մեծանուն գիտնականի յիշատակին նուիրուած, իր գաւկին Հենրիկ Անասեանի հրատարակած նորատիպ գիրքը «Հայ Մատենագիտութեան Տիրակալը» (Յակոբ Անասեան):

«Պատիւս արժանաւորաց»  
Գ. Մ.

## Լոս Անճելըսի Մէջ Տօնակատարուեցաւ

Շարունակուած էջ 1-էն

Օրուայ հանդիսավար Յովիկ Կապիկեանի բացման խօսքէն ետք բարի գալուստի մաղթանքներով հանդէս եկաւ Իրանահայ Միութեան ղեկավարներէն Թոմիկ Ալէքսանեան: Ան նշեց որ մենք ունինք հզոր բանակ մը եւ ապա ներկայացուց երկու գինուորները, որոնք Ապրիլեան պատերազմին ցոյց տուին հերոսութեան գագաթնակէտը:

մեզ պաշտպանող հզոր հայ բանակ, որ նաեւ մեր հպարտութիւնն է ու պատիւը:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Տօքթ. Յակոբ Այնթէպլեան, շնորհաւորելով Հայոց Բանակը իր անցեալի եւ ներկայի սխրագործութիւններուն առթիւ՝ մէջբերելով Խորենացիի «Մահման Քաջաց, գէնն իւրեանց» խօսքը:

Տօնակատարութեան ներկայ էին ու ողջոյնի խօսքերով հանդէս եկան



Հայաստանի հիւպատոսութեան խօսքը փոխանցեց Ռազմիկ Ստեփանեան, շնորհակալութիւն յայտնելով Իրանահայ Միութեան եւ կազմակերպիչ յանձնախումբին եւ նշեց, որ հայ ազգը կրնայ հանգիստ քուն մը քնանալ, որովհետեւ կայ

Կլէնտէյլի Քաղաքապետական Խորհուրդի անդամներ՝ Արա Նաճարեան, Կրէկ Աղաճանեան եւ Զարէն Սինանեան:

Կլէնտէյլի Քաղաքապետ Վարդան Կարապետեան շնորհաւորեց այս յատուկ առիթը եւ Իրանահայ

Միութիւնը, զնահատեց Հայ Բանակը եւ ողջունեց ներկայութիւնը Նարեկի եւ Մարատի:

Հայաստանի նախագահի խորհրդականներէն Գագիկ Գէորգեան հանդէս գալով շնորհեց, որ հայոց բանակը ամենալաւ պատրաստուած բանակներէն է եւ ըսաւ. «պատերազմի ժամանակ կը յաղթէ ոգին. հայ գինուորի ոգին»:

Գաղութի սիրուած երգիչ Արմենչիք երկու երգով խանդավառեց ներկաները, որմէ ետք խօսք առաւ փոխ գնդապետ Արծրուն Յովհաննէսեան, շնորհաւորելով բանակի ազգային սօսը եւ շնորհակալութիւն յայտնելով նշեց, որ այս համայնքը միշտ ալ ունի վերադարձի հայրենիք:

Օրուայ յատուկ երգերով բեմ բարձրացաւ Հայրենիքէն ժամանած եւ սիրուած երգիչ՝ Անտրէն: Ապա Իրանահայ սիրուած երգիչ Անտրին եւ անկէ ետք Ժանօթ Երաժիշ Գագիկ Պատալեան:

Օրուայ հիւրերը Նարեկ Մալխասեան եւ Մարատ Պետրոսեան յաջորդաբար բեմ բարձրացան, բռուն

ծափահարութիւններէ ետք համեստօրէն իրենց սրտի խօսքը փոխանցեցին Լոս Անճելըսի գաղութին եւ ներկաներուն:

Պէտք է ըսել որ սոյն ձեռնարկը շատ յատկանշական էր իր բնոյթով ու նպատակով եւ ներկաներու մօտ զգայացուց պահեր յառաջացուց:

Ի վերջոյ, Հայոց Բանակը բոլոր հայ ազգին պատիւն է եւ անոր արթուն պահակը:

Կեցցեն բոլոր անոնք որ անխաբան նուիրուած են այս սուրբ գործին եւ իրենց արեան զնով մեզի կեանք կ'ընծայեն եւ կը պաշտպանեն մեր Հայրենիքն ու հզոր Արցախը:

Նախքան տօնակատարութեան հանդիսութիւնը, հայրենի հիւրերը հանդիպում ունեցան Լոս Անճելըսի համայնքէն ներս գործող կազմակերպութիւններու ղեկավարութեան հետ ու այս առթիւ պատասխանեցին շարք մը հարցերու, յատկապէս բանակաշինութեան հետ կապուած տեղեկութիւններ փոխանցելով:

Վարձքը կատար բոլորին:  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

### ՄՇՏԱՎԱՐ ՓԱՐՈՍԸ ՏԽՐՈՒՆԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Կիլիկիոյ աղէտալի հայապարտապումէն ետք, երբ տարհանեալ եւ հայրենագուրկ հայոց բեկորները Սուրբիոյ եւ Լիբանանի մէջ շուարուն, յուսաբեկ եւ հիասթափ՝ նոր բոցներ շինելով էին մտատանջ, երբ համարեա ընչագուրկ եւ ուղեկորոյս բարոյական ու ազգային նեցուկի էին կարօտ, հայ կեանքէն ներս իր գործօն եւ խանդաբոր գործունէութեամբ հեղինակաւոր ներկայութիւն դարձաւ Սարգիս Տխրունին:




Այստեղ ուշագրաւ դէպք մըն է, որ կ'ուզեմ ձեզի պատմել. երբ մանկապարտէզի մեր ծաղիկ դասարանի աշակերտներուն գունաւոր խմորներ տուած էինք, անոնցմէ երկու աշակերտներ այդ գունաւոր խմորներէն նախընտրեցին կարմիր խմորները ընտրել եւ նայրոնէ տոպրակի մէջ դնել եւ այդ տոպրակը մեզի ցոյց տուին եւ ըսին՝ տոպրակով արին: Այս պատկերը մեզի համար շատ ծանր էր: Արդեօք ի՞նչ ուզեցին ըսել անոնք, արդեօք անոնք ուզեցին մտաբերել այն տոպրակով արինները, որ հիւանդանոցներուն մէջ վիրաւորներուն կան հիւանդներուն կը տրուի: Ասիկա փոքր բան մըն է, պատիկ օրինակ մըն է, բայց եթէ ընդհանուր նայինք, նոյնիսկ մեր աշակերտներու գործածած գոյներուն մէջ շատ բան փոխուեցաւ: Ճիշդ է, որ անոնցմէ շատերը մինչեւ հիմա ալ

Շար.ը էջ 19



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



**WELCOME HOME & AUTO INSURANCE**

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9305**

# ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՅԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ Յաճախակի եղած Հարցումի մը Պատասխանը

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակը

Հին եւ Նոր Տոմարներու հարցը յաճախ մէջտեղ կը դրուի: Թէեւ նախապէս զբաժ էի այդ մասին, այս անգամ խնդիրը աւելի մօտէն քննելով եւ պարզաբանելով կը ներկայացնեմ զայն մեր ընթերցողներուն այս տարուան Սուրբ Զատիկի տօնին (Ապրիլ 1, 2018) առնչութեամբ: Հայ Եկեղեցին եղաւ Նոր Տոմարը քաջալերողներէն մին, որուն ռասվիրան հանդիսացաւ Տ.Տ. Գէորգ Ե. Սուրբնեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր Նոյեմբեր 9, 1923 թուակիր Կոնդակով: Հին Տոմարը կը ճանչցուի որպէս Յուլեան Տոմար, Քրիստոսի ծնունդէն առաջ, երբ Յուլիանոս Ուրացոյ կայսրը հաստատեց զայն, անշուշտ զուտ կայսերական սահմաններու օգտագործման համար, առանց եկեղեցական յարաբերակցութիւն մը կամ կապ մը նկատի ունենալու քանի եկեղեցին տակաւին գոյութիւն իսկ չունէր: Իսկ Նոր Տոմարը հաստատուեցաւ 16-րդ դարուն որ կոչուեցաւ Գրիգորեան Տոմար, օրուան Գրիգոր ԺԳ. Քահանայապետին կողմէ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Գէորգ Ե. Կաթողիկոս յիշեալ թուականէն սկսեալ Հայ Եկեղեցոյ կարգաւորութեան համար հաստատեց Նոր Տոմարի դրուութիւնը: Սա կը նշանակէ թէ 1923 թուականէն առաջ Հայ Եկեղեցին կ'առաջնորդուէր Հին Տոմարի դրութեամբ ինչ որ նկատելի տարբերութիւն մը ունէր Նոր Տոմարի գործածութեանէն ետք: Առ այսօր Երուսաղէմի հայոց Պատրիարքութիւնն է միայն որ տակաւին, տեղական պայմաններու հետեւողութեամբ, կը գործածէ Հին Տոմարը, եւ այդ պատճառով եկեղեցական տօներու թուականները հիմնապէս կը հեռանան իրարմէ 13 օրերու տարբերութեամբ: Մինչդեռ երկու պարագաներուն ալ, հիմնական օրինակ մը տալով, Յունուար 6-ը ճշգրիտ թուականն է Սուրբ Մննդեան եւ Աստուածայայտութեան, սակայն Հին Տոմարի դրութեամբ այդ օրը որպէս թուական չի գրգաղիպիր Նոր Տոմարի Յունուար 6-ին:



## Հին Տոմարը

Հին եւ Նոր Տոմարներու խնդիրը ծնունդ առաւ 16-րդ դարու վերջին քառօրդին, երբ Հին Յուլեան Տոմարին գիտական անճշդութիւնները հաստատուելով Նոր Տոմարի դրութիւնը գիտականօրէն պատրաստուեցաւ Հռոմի Գրիգոր ԺԳ. Պապին հրամանով (1573-1585), որ իսկոյն գործադրուեցաւ Հռոմէական Կաթողիկ Եկեղեցոյ կողմէ որպէս Գրիգորեան Տոմար: Արեւմտեան եկեղեցիներ հետզհետէ հետեւեցան եղած կարգադրութեան եւ Հին Տոմարը դադարեցաւ գործածութենէ Հռոմի ենթակայ ազգերու կողմէ: 18-րդ դարուն Անկլիկան Եկեղեցին եւս ընդունեց Նոր Տոմարը:

## Ճշգրիտ Հաշուարկում Նոր Տոմար

Յուլեան Հին Տոմարը տարին 365 եւ մէկ քառօրդ օր կը հաշուէր, որ սակայն ճշգրիտ հաշիւ մը չէր ներկայացնէր, քանի որ ըստ գիտնականներու կատարեալ տարին նշուած օրերէն 11 եւ կէս վայրկեան պակաս էր, որ 900 տարիներու միջոցին, 1582 թուականին, տաս (10) օրերու տարբերութիւն մը յառաջացուցած էր: Այս սխալը ուղղելու համար գիտնականներ նոյն թուականի Հոկտեմբերին 10 օրերու ուստում մը կատարեցին, Հոկտեմբեր 5-ը Հոկտեմբեր 15 հաշուելով: Այս էր Նոր Տոմարին կատարած փոփոխութիւնը, որուն հետեւանքով տարին 365 օր պիտի հաշուէր, եւ չորս տարին անգամ մը Նահանջ Տարի պիտի ըլլար Փետրուար 29-ի յաւելեալ օրով:

## Հին Տոմարին Հետեւողները

Հին Տոմարին հետեւողները վերեւի նոր դրութիւնը չընդունեցին եւ նոյն 1582 թուականին 10 օրերու տարբերութեամբ ետ մնացին Նոր Տոմարէն, 1700 թուականին՝ 11 օր, 1800-ին 12 օր, եւ 1900-ին 13 օր: Այս պատճառով է որ հին եւ նոր տոմարներու համեմատութիւնը նոյնքան օրերով կը ստուգուի, Նոր Տոմարին վրայ գումարելով զանոնք: Երկու տոմարներու տարբերութիւնը առաջին աւիթով խանգարեց Զատիկի թուականին հաստատ դրութիւնը որ կանոնական դարձած էր Նիկիոյ Ա. Տիեզերական Ժողովին, որուն համաձայն զայն պէտք էր կատարել գարնան գիշերահաւասարէն վերջ եկող լուսնի լրումին յաջորդող կիրակի օրը:

եան Թուրքիոյ մայրաքաղաք Կ. Պոլսոյ մէջ էր, անհրաժեշտ կը համարէր զգուշանալ պետութեան շահերը նկատի առնելով, քանի Ռուսիա եւ Թուրքիա, մինչեւ համաշրջային Ա. պատերազմը, կը գործադրէին Քրիստոսի թուականը՝ ըստ Հին Տոմարի:

Երբ Զարական Ռուսիա 1917 թուի լեղափոխութեամբ տապալեցաւ, պոլշեակներ իսկոյն որդեգրեցին Նոր Տոմարը, որուն հետեւեցաւ Սովետական Հայաստանը 1920-ին, եւ 1922-ին ալ Ռուս Ուղղափառ Պատրիարքը ընդունեց զայն, որուն հետեւեցան Վրացի եւ Հայ Եկեղեցիները: Սակայն դեռ տարին չլրացած Ռուսիոյ Պատրիարքը յետս կոչեց իր որոշումը ու վերադարձաւ Հին Տոմարին, որուն հետեւեցաւ Վրաստանի Պատրիարքութիւնը: Հայաստանեայց Եկեղեցին Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերոյիշեալ Կոնդակով տրուած հայրապետական հրահանգը գործադրեց առանց ազդուելու Ռուս եւ Վրացի եկեղեցիներու երկմիտ կեցուածքէն, հակառակ անոր որ Խորհրդային Հանրապետութիւններու մէջ գործող հայ եկեղեցիները դժգոհութիւն յայտնեցին Զատիկի տօնը իրենց դրացի Ռուս եւ Վրացի ժողովուրդներուն հետ չկարենալ կատարելուն համար:

Սփիւռքի հայ եկեղեցիները, բացառութեամբ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, առանց դժուարութեան գործադրեցին Նոր Տոմարը եւ տօնախմբեցին Զատիկն ու յարակից եկեղեցական տօները քրիստոնէայ քոյր եկեղեցիներուն հետ միասին:

## Julian calendar

JULIAN 1582		October				Gregorian 1582	
Sun	Mon	Tues	Wed	Thurs	Fri	Sat	
	1	2	3	4	15	16	
17	18	19	20	21	22	23	
24	25	26	27	28	29	30	
31							

## Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Դիրքը

Լատին եկեղեցիները եւ արեւմտեան բոլոր եկեղեցիները արդէն ընդունած ըլլալով Նոր Տոմարը, կարգը եկած էր Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն, որոնց կողքին քաղաքական տեսակէտներ անթոյլատու կը գտնուէին նման փոփոխութեան մը, յատկապէս Յոյն եւ Ռուս եկեղեցիներու նկատմամբ: Զարական Ռուսիան արեւմտեան եկեղեցիներու ազդեցութիւնը նախատեսելով կ'արգիլէր Ռուս Ուղղափառ Եկեղեցին չարելու Նոր Տոմարին, իսկ Հայ Եկեղեցին Զարական քաղաքականութեան հանդէպ նկատումներու հարկը տեսնելով չէր համարձակեր Նոր Տոմարը գործածել: Նոյնպէս Յոյն Ուղղափառ Եկեղեցին, որուն Տիեզերական Պատրիարքութիւնը Օսմանեան

# INNOVATIVE

## Designs Manufacturing, Inc.

[idmifurnishings.com](http://idmifurnishings.com)

### ԼՈՒՌ ՑԱԿԵՐ



#### ԳԵՌՈՐԳ ԲԵՕՇԿԵՐԵԱՆ

Ինչ Հայկականու թիւն . . .  
 Վերջերս երկու դէպքեր պատահեցան Մեծն Լոս Անճելըսի մեր հայկական գաղութին մէջ, որոնցմէ մէկուն ներկայ գտնուեցաւ եւ միւսին՝ դժբախտաբար ոչ: Այս երկու դէպքերն ալ խոռովեցուցին զիս՝ որովհետեւ հայկականութենէ զուրկ էին: Հիմա թող տուէք բացատրեմ:  
 Առաջին - Կիրակի, 17 Դեկտեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Հէնտըլի Մէսայան ներկայացուցեալ Լոս Անճելըսի Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցին մէջ: (United Armenian Congregational Church)

Սրբազան Թատրերգութեան (Oratorio) երգեցողութեան ընթացքին, երեք հայ հոգեւոր հովիւներ ժողովուրդին փոխանցեցին Սուրբ Ծննդեան իրենց պատգամները: Դժբախտաբար երեք հայ հոգեւոր հովիւներն ալ իրենց պատգամը ներկայացուցին անվերջ լեզուով: Հոգեւոր հովիւները հայ են, ներկայ ժողովուրդը հայ է եւ իրենք կը խօսին անգլերէն . . .

Միթէ այս եղելութիւնը խոցելի չէ: Իսկապէս շատ խոցելի է, երբ նկատի առնենք մանաւանդ որ երեք հովիւներէն երկուքին (Իրանահայ մը եւ Հայաստանցի մը) խօսած անգլերէնը կտրտուած անգլերէն էր:

Այս պարագային սահուն անգլերէն չկարենալ խօսիլը յանցանք մը չէ, նկատի առնելով որ իրենց մայր լեզուն չէ՝ անգլերէնը: Սակայն ինչո՞ւ ինքզինքը չարչարես՝ այ մարդ, երբ կրնաս մաքուր հայերէն խօսիլ:

Ես կը խորհիմ որ այդ երկուքէն գոնէ մէկը՝ պէտք էր հայերէնով տար իր պատգամը: Մանաւանդ որ եկեղեցուց աւագ հոգեւոր հովիւը ամերիկածին հայ է եւ իր սահուն անգլերէնով տուած պատգամը՝ բաւ պէտք էր համարուէր եւ վերջ:

Համերգէն ետք տրուած հիւրասիրութեան ընթացքին՝ եկեղեցուց կից սրահին մէջ, ես իմ մտահոգութիւնս յայտնեցի պատկան մարմիններուն, որոնցմէ ոմանք արդար գտան ընդդիմումս, իսկ ուրիշներ մատնանշեցին որ համերգը հայկական բնոյթ չունէր: Այրած սրտի՝ ձախող չքմեղանք, մտածեցի ես ինձի եւ յուսալքուած՝ հեռացայ սրահէն:

Երկրորդ - Յաջորդ դէպքը՝ որուն ներկայ չէի ես, պատահեցաւ Հինգշաբթի, 25 Յունուար 2018-ի երեկոյեան ժամը 7:30-էն սկսեալ, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայատանայց Առաքելական Եկեղեցուց Կիրակոս սրահին մէջ:

Նուիրահաւաքի ձաշկերոյթ մըն էր եղածը, որ կազմակերպուած էր Փասատինայի Հայկական Յեղասպանութեան Յուշակոթողի Յանձնախումբին (Pasadena Armenian Genocide Memorial Committee) կողմէ: Նուիրահաւաքի նպատակն էր կոկիկ գումար մը գոյացնել՝ (Endowment Fund) որպէսի Յանձնախումբը կարենայ Յուշահամալիրի (տես նկարը) հոգատարութեան (maintenance) ծախսերը հոգալ:

Հոս պէտք է նշել որ Յուշահամալիրը կառուցուած է 2015 թուականին, Հայկական Յեղասպանութեան 100 ամեակին առիթով: Այսօր քանը շատ բարի, սակայն ինչո՞ւ վրդովուած եմ: Վրդովուած եմ երկու պատճառներով:

Նախ, 12 էջնոց նկարազարդ եւ գունաւոր գրքովը՝ որ բաշխուած է հանդիսականներուն, մէկ բառ իսկ հայերէն չի պարունակէր: Համատեսնապետներուն խօսքը, գանձապահին տեղեկագրութիւնը, Յուշահամալիրի նկարազարկանը եւ Յուշահամալիրի կառուցման փուլերը՝ ամբողջովին ներկայացուած են անգլերէնով:

Երկրորդ, հանդիսութեան ընթացքին, խօսք առնողները բոլորն ալ արտայայտուած են անգլերէնով: Հասկցանք որ օտար հիւրեր կային սրահին մէջ՝ ներառեալ Քաղաքապետը, Ոստիկանապետը եւ այլ քաղաքական անձնաւորութիւններ: Սակայն ներելի չէ որ բոլոր խօսքերը ըլլան անգլերէնով:

Վերջ ի վերջոյ, Հայկական Յեղասպանութեան Յուշակոթողի պահպանման եւ հոգատարութեան համար էր ձեռնարկը եւ պէտք էր որ գոնէ մէկ հոգի՝ արտայայտուէր հայերէնով, չէ՞ք խորհիր: Ներողութիւն, մոռցայ ըսելու որ ձեռնարկի վերջաւորութեան՝ պարմանուհի մը «Կիլիկիայ» երգը ներկայացուցէր է, երբ արդեն կոչնականները կը պատրաստուէին մեկնիլ սրահէն: Too little, too late, պիտի ըսէր ամերիկացին՝ եւ ես դժբախտաբար կ'եկրորդեմ այդ զգացումը . . .

### ԳԵՐՄԱՆԻԱՆ ԳԻՆՐԻԻ ՄԷՋ ԴԻՍԿԱՏՈՒՍԻՔԻՆ ԲԱՑԱԼ

Հայաստանի մէջ Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մաթիաս Քիսլեր երէկ Գիւմրիի մէջ ներկայացուցած է նորանշանակ հիւպատոս Ալեքսան Տէր-Մինասեանը՝ անոր յանձնելով Գերմանիոյ դաշնային նախագահի եւ ԱԳ նախարարութեան հիւպատոսական արտօնագիրը:



Գերմանիոյ հիւպատոսը պիտի համակարգէ Շիրակի եւ Լոռիի մարզերը: Դեսպան Մաթիաս Քիսլերէն «Ազատութիւնը» հետաքրքրուած է, որ եթէ Հայաստանը չստորագրէր Եւրոմիութեան հետ համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը, հնարաւոր է, որ հիւպատոսարանը չբացուէր: «Ասոր հետ բացարձակ կապ չունի: Իմ գործունէութեան առաջին իսկ ամիսներէն արդէն պարզ էր, որ մենք այստեղ հիւպատոսի հիմնարկի հիմնադրման կարիք ունինք: Այն ժամանակ դեռ խօսք չկար Եւրոմիութեան հետ նոր համաձայնագրի մասին, ուստի՝ մէկը միւսի հետ կապ չունի», - պատասխանած է դեսպանը:

Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Փիոթր Սվիթալսքին ալ յայտարարած է, որ յառաջիկային Հայաստանին տրամադրուելիք 176 միլիոն եւրոյն աջակցութեան մեծ մասը պիտի ներդրուի Շիրակի մարզի մէջ: Դեսպան Քիսլերին նաեւ հարց տրուած է, թէ արդե՞ք Եւրոմիութեան կողմէ իրականացուելիք յառաջիկայ ծրագրերով պայմանաւորուած է հիւպատոսական ծառայութեան բացումը:

«Ըստ հուլիսեան՝ այո: Զարգացման քաղաքականութեան շրջածիրէն ներս Գերմանիոյ ու Եւրոմիութեան կողմէ իրականացուող նախագիծերը կը դրուին համընդհանուր քննարկման, եւ մենք իսկապէս այս տարածաշրջանի համար արդէն իսկ ունինք նախագիծեր: Անոնցմէ կրնամ առանձնացնել համայնքային զարգացման ուղղուած աջակցութիւնը», - պատասխանած է Հայաստանի մէջ Գերմանիոյ դեսպանը:

Ինչ կը վերաբերի Հայաստան-Եւրոմիութիւն համաձայնագրով Երեւանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման, Մաթիաս Քիսլերի կարծիքով, այդ ընթացքին դժուարութիւններ պիտի ծագին, որոնք առաւելապէս կապուած պիտի ըլլան եւրոպական չափանիշներու ներդրման հետ: «Ես կասկած չունիմ, որ 2 կողմերն ալ պիտի ստանան համաձայնագրէն բխող պարտաւորութիւնները: Թերեւս այդ մէկը այնքան ալ հեշտ չըլլայ, երբ հաշուի առնենք եւրոպական չափանիշները, մասնաւորապէս, եւրոպական թեխնիքական չափանիշները, բայց սա գործընկերային համաձայնութիւն է, ու Եւրոմիութիւնը այս պարագային հանդէս կու գայ որպէս գործընկեր եւ ընկեր՝ որոշակի աջակցութիւն ցուցաբերելով Հայաստանին՝ այդ համաձայնագրի դրոյթները իրականացնելու հարցով», - պարզաբանած է Մաթիաս Քիսլերը:

Գերմանիոյ կառավարութիւնը մտադիր է յառաջիկային Շիրակի ու Լոռիի շարք մը ներդրումային ծրագրերը իրականացնել: «Անոնցմէ ամենխոշորը կապուի Զրամբարի վերականգնման ծրագրին է, որ ուղղուած է ոչ միայն Զրամբարի չափերու մեծացման, այլեւ այդ տարածաշրջանին մէջ ոռոգման համակարգը աւելի արդիւնաւէտ դարձնելուն», - ըսած է դեսպանը:

Ի դէպ նշենք, որ Գիւմրիի մէջ Գերմանիոյ հիւպատոսարանը Գերմանիա մեկնիլ ցանկացողներուն վիզա տրամադրելու իրաւասութիւն պիտի չունենայ:

Գերմանիան 4-րդ երկիրն է, որ այսուհետ Գիւմրիի մէջ հիւպատոս կ'ունենայ:

**OFFICE SPACE FOR RENT  
 IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

**1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Դետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506**

**SYRIAN ARMENIAN RELIEF FUND**

**Save Support Sustain**

Syrian Armenian Relief Fund  
 P. O. Box 1948  
 Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org



### 5 ԲԱՆ, ՈՐՈՆՔ ԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵՆ ԿԱՆԱՑ ԻՆՔՆԱԳՆԱՏԱԿԱՆԸ

Միրելի կանայք, ինչպես ինքզինք կը պահէ ինքնավստահ կիրնը՝ ինքնավստահ կիրնը չի վերլուծեք, թէ արդեօք հաճելի կը թուի՞ տղամարդուն. ան վստահ է, որ հաճելի կը թուի:

Բարձր ինքնագնահատականով մարդիկ կը հաւատան, որ արժանի են սիրոյ եւ չեն ալ կասկածիր, որ ոեւէ մէկը իրենց հանդէպ չի նկատեր ատիկա: Անոնք գիտեն, որ լաւ են եւ կը հաւատան, որ ճիշդ մարդիկ կը տեսնեն այդ մէկը: Անոնց ինքնագնահատականը կախեալ է այն բանէն, թէ ուրիշը ինչ կը մտածէ իրենց մասին: Այդ պատճառով ալ, նման կիրնը համոզուած է, որ հաճելի է տղամարդուն եւ կրնայ յարաբերութիւններ սկսիլ այստեղ ու այս վայրկեանին՝ վայելելով այդ պահը առանց վախերու եւ կասկածներու:

Ինքնավստահ մարդիկ կը գիտակցին, որ եթէ յարաբերութիւնները չեն շարունակուած, կը նշանակէ, որ այդպէս ալ պէտք է ըլլար: Եւ ո՛չ այն պատճառով, որ անոնք սխալ բան ըրած են, այլ պարզապէս՝ ո՛չ բոլոր մարդիկ կը համապատասխանեն իրարու, իսկ երբեմն ալ երկու մարդ պարզապէս անհամատեղելի են: Ինքնավստահ կիրնը իրեն ուղղուած անձնական վիրաւորանք չի համարեր, երբ տղամարդը չի փափաքիր շարունակել յարաբերութիւնները:

Ինքնավստահ կանայք առողջ սահմաններ կը դնեն:

Բարձր ինքնագնահատականը անուղղ անձնական մտածողութիւն: Աղջիկը, որուն հետ դիւրին է կապ ունենալը, որ կրնայ ծիծաղիլ ու իր շուրջ անմիջական մթնոլորտ ստեղծել, աւելի դիւրութեամբ կրնայ տղամարդու հետ խոր զգացմունքային կապ ստեղծել: Տղամարդը կ'ուզէ, որ կիրնը ուրախութիւն բերէ իր կեանքին: Միրեցէ՛ք այն, ինչ որ ձեր կեանքին մէջ տեղի կ'ունենայ հիմա, մի՛ կառչիք անցեալին ու մի՛ մտահոգուիք ապագայով: Եղէք դրական ու լաւատես:

Ունենալ իր արժէքը: Կրցէք ընդունիլ հաճոյախօսութիւնները: Մի՛ ամչնաք, մի՛ կարմրիք ու ձեր արժանիքները մի՛ նուստացնէք: Եթէ տղամարդը ձեզի հաճոյախօսութիւն կ'ընէ, շնորհակալութիւն յայտնեցէ՛ք, այլ ո՛չ թէ հերքեցէ՛ք: Խելացի տղամարդը երբեք չի ստեր: Միրեցէ՛ք դուք ձեզ: Նայեցէ՛ք հայելիին մէջ, գովեցէ՛ք դուք ձեզ ձեր արժանիքներուն համար, այլ ո՛չ թէ քննադատեցէ՛ք՝ թերութիւններուն համար:

Յարգել տղամարդը: Խելացի կիրնը կողքին տղամարդը ստիպուած չէ մշտապէս ապացուցել, որ ինք տղամարդ է, այլ ո՛չ թէ լաթ: Հակառակը՝ ան ատիկա հարիւրապատիկ շատ կ'ընէ, եթէ զգայ կիրնը երախտագիտութիւնն ու իրենց անհրաժեշտութիւնը:

Պարտաւորութիւնները, ինչ որ կ'ուզէ: Դուք կ'ուզէք ըլլալ փոքրիկ աղջիկ, որուն ձեռքերուն վրայ կը պահեն ու կը գնեն իր բոլոր սիրած բաները, իսկ տղամարդը կ'ուզէ, որ դուք ըլլաք հետեւողական, հաւասարակշռուած ու ինքնավստահ: Մի՛ լռէք ու մի՛ ստիպէք, որ ան կուսէ՛ք ձեր ցանկութիւնները: Ատոր փոխարէն բացայայտօրէն ըսէք, թէ ինչ կ'ուզէք, ինչը կ'անհանգստացնէ ձեզի, եւ մի՛ վախնաք «ոչ» ըսելէն: Եղէք կիրն, որ կը սիրէ իր կեանքը, ու տղամարդն ալ պիտի փափաքի դառնալ ձեր կեանքին մէկ մասը:

Իմանալ իր արժէքը: Կրցէք ընդունիլ հաճոյախօսութիւնները: Մի՛ ամչնաք, մի՛ կարմրիք ու ձեր արժանիքները մի՛ նուստացնէք:

### ԿԱՆԱՑԻ ՅԱՏԿԱՆԻՇԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՅԻԱՑՆԵՆ ՏՂԱՄԱՐԴԸ

Ունենալ դրական մտածողութիւն: Աղջիկը, որուն հետ դիւրին է կապ ունենալը, որ կրնայ ծիծաղիլ ու իր շուրջ անմիջական մթնոլորտ ստեղծել, աւելի դիւրութեամբ կրնայ տղամարդու հետ խոր զգացմունքային կապ ստեղծել: Տղամարդը կ'ուզէ, որ կիրնը ուրախութիւն բերէ իր կեանքին: Միրեցէ՛ք այն, ինչ որ ձեր կեանքին մէջ տեղի կ'ունենայ հիմա, մի՛ կառչիք անցեալին ու մի՛ մտահոգուիք ապագայով: Եղէք դրական ու լաւատես:

Ունենալ նախապիտութիւններ ու զբաղում: Հասուն, հետաքրքրական անձնաւորութիւնը պէտք է ունենայ իր հետաքրքրութիւնները, ընկերները, նախասիրութիւնները: Նման կիրնը աղմուկ չի բարձրացներ, եթէ իր գուզընկերը ուզէ երեկոն անցընել ընկերներու հետ: Ան այդ ժամանակը կ'օգտագործէ խելացի ձեւով ու կը զբաղի իր սիրելի գործերով: Վիճելու առիթ մի՛ փնտռէք, զարգացէ՛ք ու սիրեցէ՛ք ձեզ շրջապատող հակայական աշխարհը, այլ ո՛չ թէ այն փոքր աշխարհը, ուր միայն երկուքով էք:

Իմանալ իր արժէքը: Կրցէք ընդունիլ հաճոյախօսութիւնները: Մի՛ ամչնաք, մի՛ կարմրիք ու ձեր արժանիքները մի՛ նուստացնէք: Եթէ տղամարդը ձեզի հաճոյախօսութիւն կ'ընէ, շնորհակալութիւն յայտնեցէ՛ք, այլ ո՛չ թէ հերքեցէ՛ք: Խելացի տղամարդը երբեք չի ստեր: Միրեցէ՛ք դուք ձեզ: Նայեցէ՛ք հայելիին մէջ, գովեցէ՛ք դուք ձեզ ձեր արժանիքներուն համար, այլ ո՛չ թէ քննադատեցէ՛ք՝ թերութիւններուն համար:

Յարգել տղամարդը: Խելացի կիրնը կողքին տղամարդը ստիպուած չէ մշտապէս ապացուցել, որ ինք տղամարդ է, այլ ո՛չ թէ լաթ: Հակառակը՝ ան ատիկա հարիւրապատիկ շատ կ'ընէ, եթէ զգայ կիրնը երախտագիտութիւնն ու իրենց անհրաժեշտութիւնը:

Պարտաւորութիւնները, ինչ որ կ'ուզէ: Դուք կ'ուզէք ըլլալ փոքրիկ աղջիկ, որուն ձեռքերուն վրայ կը պահեն ու կը գնեն իր բոլոր սիրած բաները, իսկ տղամարդը կ'ուզէ, որ դուք ըլլաք հետեւողական, հաւասարակշռուած ու ինքնավստահ: Մի՛ լռէք ու մի՛ ստիպէք, որ ան կուսէ՛ք ձեր ցանկութիւնները: Ատոր փոխարէն բացայայտօրէն ըսէք, թէ ինչ կ'ուզէք, ինչը կ'անհանգստացնէ ձեզի, եւ մի՛ վախնաք «ոչ» ըսելէն: Եղէք կիրն, որ կը սիրէ իր կեանքը, ու տղամարդն ալ պիտի փափաքի դառնալ ձեր կեանքին մէկ մասը:

Իմանալ իր արժէքը: Կրցէք ընդունիլ հաճոյախօսութիւնները: Մի՛ ամչնաք, մի՛ կարմրիք ու ձեր արժանիքները մի՛ նուստացնէք: Եթէ տղամարդը ձեզի հաճոյախօսութիւն կ'ընէ, շնորհակալութիւն յայտնեցէ՛ք, այլ ո՛չ թէ հերքեցէ՛ք: Խելացի տղամարդը երբեք չի ստեր: Միրեցէ՛ք դուք ձեզ: Նայեցէ՛ք հայելիին մէջ, գովեցէ՛ք դուք ձեզ ձեր արժանիքներուն համար, այլ ո՛չ թէ քննադատեցէ՛ք՝ թերութիւններուն համար:

### ՍԻՐԱԽԱՂԸ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՒ ԿՆՈՋ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՄԵՆԱԼԱՒ ԼԵՁՈՒՆ Է

Գոյութիւն ունի մարդկութեան մաս մը, որուն շատ դիւրին կը տրուի սիրախաղը, ատիկա անոնց համար բնատուր է: Սակայն կան մարդիկ, որոնք պէտք է սորվին գայն: Ուստի, առաջին հերթին, պէտք է հասկնալ, թէ ինչ է սիրախաղը: Սիրախաղը ոչ բառացի եւ բառացի գործողութիւններու հաւաքածոյ է: Անիկա գործի կը դրուի այն պահուն, երբ ցանկութիւն կ'առաջանայ ձեզի համար հաճելի թուացող մարդուն մէջ հետաքրքրութիւն արթնացնել: Սիրախաղ ընելը զուարճալի է, հետաքրքրական եւ բնական, ու ամենակարեւորը՝ անվտանգ: Երբեմն մէկ շարժումը կրնայ հազար բառ փոխարինել կամ ցոյց տալ այն, ինչ որ բառերով անհնար է նկարագրել: Սիրախաղի շնորհիւ կիրները կրնան ո՛չ միայն ընկերական, այլ նաեւ ռոմանթիկ յարաբերութիւններ հաստատել: Հոգեբանները կ'առանձնացնեն տասը խորհուրդ, որոնք պիտի օգնեն զրազէտ սիրախաղ ընելու:

1) Միշտ ժպտացէ՛ք. ժպտը ձեր հոգիին մէկ մասն է: Անիկա կ'ապացուցէ, որ դուք բաց եւ անկեղծ անձնաւորութիւն էք: Ժպտելը մագնիս է եւ կը քաշէ միայն լաւ մարդոց:

2) Հաճոյախօսութիւններ ըրէ՛ք. ատիկա ցոյց կու տայ, որ դուք աւելի ուշադիր էք յատուկ մէկուն հանդէպ քան մնացածին: Պարտադիր պէտք է ամէն ինչ անկեղծ ըսել, ատիկա նոյնպէս կրնայ բերել ճակատագրական շրջադարձերու ձեր կեանքին մէջ:

3) Տեսողական կապ: Անհրաժեշտ է մէկ անգամէն կապ հաստատել, ատիկա կը գրաւէ շատերը: Կարեւորը, որ հայեացքը բարի ըլլայ: Պէտք է սղոցել հայեացքով կամ որեւէ խորամանկ հայեացք նետել, ատիկա կրնայ վանել:

### ԻՆՉՊԻՍԻ՞ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ ԿԸ ՊԱՅԵ ԱՂՔԵՐՈՒՆ ԳՈՅՆԸ

1) Մոխրագոյն աչքեր: Աչքերու աչք գոյնը ունեցողներուն համար բնորոշ են վճռականութիւնը եւ անսովոր միտքը: Անոնք երբեք չեն թաքնուիր եւ չեն խուսափիր խնդիրներէն, այլ պատրաստ են առերեսուելու անոնց: Սակայն այն իրավիճակներուն, երբ խնդիրը չի լուծուիր ուղեղով, անոնք գայն կը փոխանցեն եւ կը հեռանան:

2) Սեւ աչքեր: Սեւ աչքերը կը նշանակեն, որ մարդը ունի հզօր ուժ: Այսպիսի անձնաւորութիւնը բաւական նախաձեռնող է, երբեք տեղը չի նստիր, կը տարբերի բարձր կենսունակ դիմացկունութեամբ: Սեւ աչքեր ունեցողները քիչ մը տարօրինակ են եւ սիրաւատ ու ատոր մէջ ո՛չ մէկ զարմանալի բան կայ:

3) Ծագանակագոյն աչքեր: Եթէ մարդը կը ծնի շագանակագոյն աչքերով, ուստի բնութիւնը անոր արդէն պարզեւած է սրամտութիւն, գրաւչութիւն եւ զգայունութիւն: Այսպիսի մարդիկ շատ դիւրազգաց են, բուռն եւ կրնան բռնկիլ

տել, ատիկա կը գրաւէ շատերը: Կարեւորը, որ հայեացքը բարի ըլլայ: Պէտք է սղոցել հայեացքով կամ որեւէ խորամանկ հայեացք նետել, ատիկա կրնայ վանել:

4) Հետաքրքրական դառնալու համար անհրաժեշտ է լսել խօսակցը: Այսինքն, դուք պէտք է աւելի շատ լսէք քան խօսիք: Ատիկա կարեւոր է:

5) Եթէ մարդը ձեզի համար հաճելի է, անհրաժեշտ է մօտենալ, բարեւել, քանի մը հաճոյախօսութիւն ընել եւ այդ ժամանակ խօսակցութիւնը ինքնիրեն կ'ըլլայ:

6) Ամէն տեղ ձեզ ազատ պահեցէ՛ք: Հիւրերու մօտ նոյնպէս: Ատիկա դիմացիներին կը ստիպէ մտածել, որ դուք ա՛յն անձնաւորութիւնն էք, որ իրեն պէտք է:

7) Միշտ ձեր հետ որեւէ «գործակից» ունեցէ՛ք: Սիրախաղի համար լաւագոյն գործակիցներ կրնան ըլլալ ընտանի կենդանիները, հետաքրքրական ամսագիրները կամ գիրքը, գեղեցիկ գլխարկը կամ անուշահոտը:

8) Միշտ ուրախ եղէ՛ք, ցոյց տուէ՛ք ձեր տաղանդը եւ կատակելու զգացումը: Ոչ լարուած մարդիկ շրջապատին համար միշտ հաճելի են:

9) Մօտենալով զրուցակիցին, սկսեցէ՛ք խօսակցութիւնը սովորական «բարեւ»-ով: Այնուհետեւ կարելի է զարգացնել խօսակցութիւնը, օրինակ, արտայայտելով սեփական կարծիքը որեւէ բանի մասին:

10) Ամենակարեւոր կանոնը՝ դադարեցէ՛ք վախնալ որեւէ բանէ: Սիրախաղ պէտք է ընել զրազէտ եւ առանց բուռն խանդավառութեան:

որեւէ պահու: Սակայն, անոնք երբեք երկար ժամանակ նեղացած չեն մնար: Միակ բանը, որ կարելի է համարել անոնց թերութիւնը՝ կամակորութիւնն է:

4) Կանաչ աչքեր: Կանաչ աչքերը սուտ կը պահեն: Այսպիսի մարդիկ չեն առանձնանար իրենց զգացմունքայնութեամբ, անոնք նպատակասլաց են եւ չեն կանգնիր նոյնիսկ սիրելիի արցունքներուն պարագային: Կանաչ աչքեր ունեցողները յաճախ զայրոյթի բռնկումներ կ'ունենան եւ կ'ընկճուին՝ առանց հիմնաւոր պատճառի, սակայն ատիկա այդքան ալ յաճախ չ'ըլլար:

5) Կապույտ աչքեր: Երկնագոյն աչքեր ունեցողները կ'առանձնանան նրբութեամբ, անկեղծութեամբ, հաւատարմութեամբ: Ընկերներու հետ յարաբերութիւններու մէջ անոնք շատ բարի են եւ յուսալի, իսկ թշնամիներու համար՝ միշտ կանգուն եւ սկզբունքային: Այսպիսի մարդիկ կրնան լսել եւ միշտ գիտեն ինչպէս պահել զրոյցը

Դուք պարտաւոր չէք որեւէ բան հանդուրժելու եւ որեւէ բանի համակերպելու: Դուք ձեռքեր, ոտքեր, գլուխ եւ շաքարիկներ 168 ժամ ժամանակ ունիք, որպէսզի ընէք այն ամէնը, ինչ իսկապէս կ'ուզէք:



### ԿԵԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՇԱՏԵՐՈՒ ԿՈՂՄԵ ՅԱՃԱՆ ԿԸ ՄՈՌՑՈՒՄ

Ամէն վայրկեան, իւրաքանչիւր ակնթարթ կեանքին «այո՛» ըսէ (իսկ եթէ որեւէ բանի պէտք է «ոչ» ըսել, մի՛ վախնար): Ընդհատապէս ձեռք չկայ: Կան պարզապէս

իրեր, յարաբերութիւններ, բարեկամութիւն, սէր, որոնք կ'ըլլան կամ՝ չեն ըլլար: Ապրիլ կը սորվիս ապրելու ընթացքին: Դուռն աւելի դանդաղ կը սորվիս, եթէ կը կար-

### ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՉՈՐՍ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԿՇՈՒՉՆԵՆ ՏԵՍՆԵԼ ԿՆՈՋ ՄԵՋ

Բարութիւն: Սկիզբը բոլորս բարի ու համակրելի ենք, բայց կարեւոր է բարի ըլլալ ո՛չ միայն միմեանց, այլեւ՝ վաճառողներու, մատուցողներու, անցորդներու նկատմամբ: Տղամարդը ուշադրութիւն կը դարձնէ, թէ կիրն ինչպէս կը խօսի ու կ'արտայայտուի իր նախակիրն գուզընկերներուն, գործընկերներուն եւ անծանօթներու մասին:

Խելք: Ցանկալի բան կայ ա՛յն կնոջ մէջ, որ կիրթ է, սրամիտ ու կրնայ խօսիլ որեւէ թեմայով: Ատիկա ամենեւին ալ չի նշանակեր, որ ան պէտք է քանի մը վկայական ունենայ, ատիկա կը նշանակէ հնարամտութիւն, կատակելու զգացում, իմաստութիւն: Կին, որ կրնայ խորիմաստ հարցեր տալ ու դատել տիեզերքի մասին, աստղերուն տակ պառկած:

Բաց մտածողութիւն: Ո՛չ մէկուն համար հաճելի է, երբ իրեն կ'ըսեն, որ ան իրաւացի չէ: Ո՛չ ոք կ'ուզէ, որ իր սխալը ուղղեն: Տղամարդը կ'ուզէ այնպիսի կին, որ ինքզինք չի դատապարտեր, որ բաց է նոր մտածողութեան ու տեսակէտերու համար: Կը սիրէ ճամբորդել, հանդիպիլ նոր մար-

դոց, գիտնալ որեւէ նոր բան, ընդլայնել իր հորիզոնները: Ան կը ճանչնայ ինքզինք: Եթէ կիրն բաց մտածողութիւն ունի, չի նշանակեր որ ան միամիտ է: Ան կը ճանչնայ ինքզինք, կը վստահի իր ներքին ձայնին, գիտէ թէ ինչ կ'ուզէ, ինչ՝ ո՛չ: Ան չի փորձեր ձեւանալ ու կեղծել: Ան կրնայ ինքնաարտայայտուիլ: Ան իր մտքերն ու զգացմունքները կ'արտայայտէ, կ'ըսէ թէ ինչ կը մտածէ: Պարտադիր չէ, որ ան չափէն աւելի շատախօս ըլլայ: Ան կրնայ ըլլալ համեստ ու հանդարտ, բայց գիտէ ինչպէս արտայայտել ինքզինք՝ մարմնի լեզուն, նկարչութիւն, բանաստեղծութիւններ, պարեր:

Պարզութիւն: Տղամարդիկ կը գնահատեն յաւակնութիւնները ու մեծ երազանքները, բայց անոնք կ'ուզեն այնպիսի կին, որ կը գնահատէ կեանքը՝ մանրութիւններով հանդերձ, որ գիտէ թէ կեանքի մէջ ամենակարեւորը ընտանիքն է, ընկերութիւնը, սէրը, մտերմութիւնը: Ան ազնիւ է ու գործնական, չի վազեր հարստութեան ու կարգավիճակի ետեւէն, կ'ուզէ ապրիլ այստեղ ու հիմա:

### ՍԻՐՈՅ ԿԱՐԵՒՈՐ ԴԱՍԵՐ, ՉՈՐՍ ԿԻՆԵՐԸ ՇԱՏ ՈՒՇ ԿԸ ՀԱՍԿԱՆ

Երբեմն մենք դասը մէկ անգամն չենք հասկնար: Մանաւանդ եթէ անիկա կը վերաբերի սիրոյ, որ կը կուրցնէ, վարդազոյն ակնոցներ կը հագնէ: Այդ պատճառով երբեմն մենք կը սկսինք շատ ուշ հասկնալ ամէն ինչ: Ահաւասիկ դասեր, զորս կիրնը պէտք է շուտ հասկնան:

1) Ո՛չ մէկուն կարելի է ստիպել սիրել ձեզ: Առաւելագոյնը, որ դուք կրնաք ընել, լաւ մարդ ըլլալն է, որուն կարելի է սիրել: Մնացեալը կախեալ է դիմացինէն: Որքան ալ շատ փորձէք սիրել կամ հոգալ դիմացինին, ատիկա անոր մօտ պատասխան զգացումներ չ'առաջացնէ: Սակայն, նկատի ունեցէք, որ ատիկա աշխարհի վերջը չէ: Եթէ այս մասին ժամանակին իմանաք, բնականաբար դուք ձեզ չէք գոհաբերեր ա՛յն տղամարդուն համար, որ չի պատասխաներ ձեր զգացումներուն: Պարզապէս փորձեցէք դուք գերազանցել դուք ձեզ, դիմացինին առաւելագոյն առիթ

տալու, որ ձեզ սիրէ: Նոյնը կը վերաբերի նաեւ ձեզի, պէտք է սիրել մէկը ուղղակի անոր համար, որ ան կը սիրէ ձեզ: Ատիկա նաեւ պէտք է ձեր ընտրութիւնը ըլլայ:

2) Իւրաքանչիւր մարդ կը սիրէ իր ձեռով, կու տայ այն սէրը, որ կրնայ, այլ ո՛չ այն, գոր ուրիշը կը սպասէ իրմէ: Ամէն մարդ իր կերպով կ'արտայայտէ իր զգացմունքները: Կարելի չէ ըսել ինչպէս պէտք է սիրել մեզի: Մէրը մարդու հոգիի արտացոլումն է: Պէտք է ընդունիլ դիմացինի սէրը այնպէս՝ ինչպէս կայ:

3) Անվերապահ սէրը պէտք է ըլլայ ո՛չ միայն ուրիշի, այլ նաեւ սեփական անձի հանդէպ: Մենք կրնանք սիրել յատակ պայծառներու մէջ, մենք կրնանք մեղադրել եւ քննադատել: Սակայն, եթէ մենք դադրինք ատիկա ընել, բնականաբար պիտի կարենանք զգալ իսկական սէրը: Սկսիլ պէտք է սեփական անձէն. սորվինք սիրել մենք մեզի ամբողջութեամբ, եւ ապա՝ ուրիշները:

### ՔՆԱՆԱԼԵՆ ԱՌԱՋ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԵՐՍԵԼ ՈՏՔԵՐԸ

Ոտքերու մերսումը բաւական կարեւոր է ինքնագզացողութեան լաւացման համար: Այս սովորութիւնը կրնայ դրական ազդեցութիւն ունենալ մարմնի վրայ:

Ուժ: Ոտքերու մերսումը ուժի խթանման միջոց կրնայ ըլլալ: Անիկա կը լաւացնէ արեան շրջանառութիւնը: Ոտքերու մերսումը ամբողջութեամբ կը հանգստացնէ մարմինը: Գերլարուածութիւնը կ'ազդէ շրջանառութեան վրայ, անդարար նիւթերն ու կենսասնիթերը չեն հասնիր մարմնի բոլոր բջիջներուն: Ոտքերու մերսումը կ'օգնէ իջեցնելու ճնշման մակարդակը եւ արեան շրջանառութիւնը հակասօրէն կը լաւանայ:

Հաւասարակշռութիւն եւ ներդաշնակութիւն: Ծնշուածութիւնը, ամէնօրեայ լարուածութիւնը երբեմն անհնար կը դարձնեն մարմնի եւ ուղեղի հանգստա-

նալը: Ոտքերուն մերսումը կրնայ օգնել նաեւ հաւասարակշռելու եւ ներդաշնակ դարձնելու մարմինը մտքի հետ:

Առողջ մաշկ: Արեան շրջանառութեան աշխուժացման իբրեւ արդիւնք՝ կը կանխարգիլուի ճարպերու եւ թոյներու կուտակումը մաշկի ծակոտիներուն մէջ: Ոտքերուն մերսումը նաեւ կրնայ պայքարիլ ազատ մասնիկներու դէմ՝ օգնելով կանխարգիլել վաղաժամ ծերացումը, լաւացնել մաշկի ընդհանուր վիճակը:

Կը կանխարգիլէ ոտքերուն ջղաձգումները: Ոտքերու մերսումը կրնայ օգնել նաեւ խուսափելու ոտքերու ջղաձգումէն, այնպիսի մարտնչութեան զգացումէն:

Հանգստութիւն եւ թուլութիւն: Ոտքերու մերսումը թոյլ կու տայ հանգստանալու, ազատելու յոգնածութենէն:

### ՎԵՑ ՆՇԱՆ, ՈՐ ԴՈՒՔ ԾՆԱԾ ԷՔ ԱԻԵԼԻՆ ԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1) Դուք անընդհատ զբաղած էք ուրիշներու յանձնարարութիւնները կատարելով: Հաւանաբար դուք չէք գիտեր՝ բնածին առաջնօրդ էք, թէ՞ ոչ, բայց, ամէն պարագայի, ոչինչ կ'ընէք, որպէսզի ձեզ մեծ փոփոխութիւններու: Կը զգաք, որ կանգնած էք նոյն տեղը՝ աշխատելով ուրիշներու համար: Դուք կ'ուզէք ազատութիւն, արուեստ եւ զարգացում, բայց հիմնախորէն կը հասկնաք, որ չէք կրնար հասնիլ այդ ամէնուն՝ շարունակելով աշխատիլ ունէ մէկուն համար: Դուք գիտէք, որ ձեր տեսիլքը որեւէ բան արժէ: Եւ դուք գոհացած պիտի ըլլաք միայն ա՛յն պարագային, երբ պիտի կարենաք լիովին դրսեւորել ձեր բոլոր ունակութիւնները:

2) Դուք անդադար կը յետաձգէք ձեր գործերը՝ սպասելով ներշնչման կամ «ճիշդ» տրամադրութեան: Դուք յաճախ անհրաժեշտ աշխատանքը կատարելու փոխարէն ժամանակը կը լեցնէք անպէտք կամ ոչ հրատապ գործերով: Բայց եթէ դուք կուզուած էք աւելի ընելու համար, պիտի գայ ժամանակը եւ պիտի ընէք այն, ինչ որ իսկապէս կ'ուզէք: Բայց հաւանաբար դուք չէք ուզեր որեւէ բան ընել, քանի որ ատիկա պարտականութիւն կը թուի, կամ երեւի կը վախնաք, որ պիտի ձախողիք առաջին իսկ փորձին, հնարաւոր է նաեւ, որ պարզապէս ներշնչուած չէք: Երբեմն հարկաւոր է ակնաջղ դնել կանխագզացումներուն, եւ անոնք պիտի յուշեն, թէ իրականութեան մէջ ինչ պէտք է մեզի:

3) Փոքր ժամանակ պաշտօնական զգեստով աշխատանքի գացող մարդոց խելագար կը համարէիք հաւանաբար: Դուք գիտէիք, որ աւելի իմաստալից պիտի ըլլար, եթէ ընթանայիք ձեր ուղիով, որ կ'ենթադրէր առաւել ազատութիւն ու ճկունութիւն, եւ ո՛չ թէ գործնապաշտութիւն, ինչպէս այն մեծերու պարագային: Եւ այժմ շահելով կամ կորսնցնելով ցանկալին՝ դուք ս-


տոյգ գիտէք, որ ձեր տեսիլքը բացարձակապէս ճշմարիտ էր:

4) Դուք ունիք գործ՝ այնքան սիրելի, որ պատրաստ էք զբաղելու անով անվճար: Բայց ժամանակ չկայ: Ինչ հետաքրքրական շրջապատ չէ. որքան շատ կու տաս, այնքան շատ կը ստանաս: Սակայն, եթէ դուք կը զբաղիք իսկապէս սիրելի գործով, նիւթական շահի մասին խօսք անգամ չի կրնար ըլլալ: Դուք պարզապէս բաւակալութիւն կը ստանաք:

5) Դուք իտէպիտ էք եւ ուռմանթիկ, որ կ'երագէ փոխել աշխարհը: Հաւանաբար մանկութեան տարիներուն աշխարհին նայած էք վարդազոյն ակնոցով, բայց որքան կը մեծնաք, այնքան աւելի կը փոխուին հայեացքները: Դուք պէտք է սթափ եւ առանց չափազանցութեան գնահատէք իրավիճակը եւ ամէն բան, որ ձեզ կը շրջապատէ: Բայց եւ այնպէս, ո՛վ գիտէ, թէ որն է վարդազոյն ակնոցի եւ իրականութեան այդ սահմանը: Ատիկա պէտք է վճռէք ինքնուրոյն: Ըլլալ իտէպիտ, չի նշանակեր ըլլալ խենթ, այլ՝ որ դուք արարող էք:

6) Դուք միշտ չէ, որ կրնաք բացատրել, թէ ինչու գիտէք այնչինչ գիտէք, եւ ատիկա կը պատահի բաւական յաճախակի: Մարգարէները տեսիլքներ չեն ստանար որեւէ անյայտ տեղէ, եւ աշխարհը չի շնչար անոնց որեւէ գործողութեան մասին: Անոնք կը ստանան տեսիլքներ իրենց ներքին աշխարհէն, որ կը յուշէ լաւագոյն ելքը: Անուանեցէք ատիկա ներքին ձայն, հոտառութիւն կամ վեցերորդ զգայարան: Բայց եթէ դուք նախատեսուածէք այս աշխարհին վրայ աւելի ընելու համար, մշտապէս պահանջուած պիտի ըլլաք Տիեզերքէն: Յիրաւի, դուք այլընտրանք չունիք, եթէ ձեր բախտը մեծ գործեր ստեղծելն է: Ի վերջոյ, ձեր վեցերորդ զգայարանը պիտի յուշէ ձեզի, թէ ինչ ընել:

ԱՄՈՒՄԵԱՅԵԱԼՔ  
Ճանի (Johnny) Նիկողոսեան ընդ Արտա Ազիզեան  
Յունուար 27, 2018  
Մեր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնենք ամուսնացեալ գոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Նիկողոսեան եւ Արսէնեան ընտանիքներուն:  
«Մասիս»

**VA Print Media**  
Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles  
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ  
  
**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### ՊԱՏԵՐԱԶՄԵՆ ՇԱՏ ԲԱՆ ՍՈՐԿԵՑԱՆՔ ԲՈՒՈՐՍ

Շարունակուած էջ 14-էն

խաղաղութիւնը կերեւակայեն, բայց ամէն պատկերի մէջ, ինչպէս քիչ առաջ ըսի, նոյնիսկ ծաղիկներով ներկայացուած պատկերին մէջ ինչ որ տեղ պատերազմի գոյնը կամ շունչը կայ: Իսկ ասկէ գատ ալ, պատերազմը մեզի որպէս ուսուցչական կազմ կամ տնօրէնութիւն, յաճախ ստիպեց որ անոնց սանձերը թողնանք. շատ յաճախ մենք արտօնեցինք այնպիսի բաներ, որոնք թոյլատրելի չէին, շատ նրբանկատ գտնուեցանք, տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը, բոլորս այնպիսի արտօնութիւններ տուինք, որ խաղաղ պայմաններուն տակ չէինք արտօնել: Զեւոյ մը ստիպուած էինք, որովհետեւ երկիրը պատերազմական իրավիճակի մէջ էր, իսկ այսօր երբ կը փորձենք վերադառնալ առաջուան բնականոն վիճակին, կը զգանք որ բաւական դժուար պիտի ըլլայ այդ մէկը, որովհետեւ, պատկերաւոր ըսած, սանձը շատ թոյլցուցած էինք եւ այսօր կանգնած ենք լուրջ խնդրի մը առջեւ, որպէսզի վերադառնանք դէպի մեր բնականոն շունը:

- Անշուշտ այս բոլորը այսօր կը քննարկէք ձեր գործընկերներուն, ուսուցիչներուն, տնօրէնութեան հետ, ի՞նչ եզրակացուեցան կրցած էք յանգիլ:

- Կը քննարկենք, այո, բայց յատակ եզրահանգումներ չունինք, որովհետեւ իրավիճակը բաւական բարդ եւ նուրբ է. պէտք է շատ դանդաղ քայլերով մեր բնականոն շունին վերադառնանք, եւ այդ մէկը ժամանակ կը պահանջէ:

- Իսկ ծնողներու մասին ի՞նչ կրնաք ըսել, ինչպէ՞ս կ'ընդունին ձեր մօտեցումները կամ դէպի առաջուայ վիճակին վերադառնալու փորձերը, խստացունք, կարգապահութիւնը եւ այլն:

- Գիտէք, ոչ բոլոր ծնողները նոյն իրավիճակի մէջ են, այսօր Հայաստանի մէջ բոլորովին նոր կացութիւն մըն է, որ կը տիրէ, որովհետեւ ծնողներէն շատ շատեր կ'աշխատին, եւ անոնցմէ շատեր ժամանակ չունին այս մանրամասնութիւններուն հետեւելու եւ այդ մէկը մեզի համար հասկնալի է: Բոլորս ալ կը զգանք, որ մեր աշակերտները ընտանեկան խնամքի պէտք ունին եւ այդ մէկը սկսած է պակսիլ, ինչպէս ըսի, պայմաններու բերումով: Եւ մենք յաճախ դուրսէն կը լսենք, որ այս ինչ աշակերտին մայրը կամ քոյրը, կամ ան, որ հոգ պէտք է տանի իրեն, որոշ գործեր կը կատարէ, ճաշարաններու համար յատուկ ուտելիքներ կը պատրաստէ: Առաջ այս երեւոյթները չկային Հայաստանի մէջ, անոնք անշուշտ պատերազմի հետեւանքով է, որ ստեղծուեցան, եւ բոլոր այդ մայրերը եւ քոյրերը ստիպուած են աշխատիլ, որպէսզի իրենց ընտանիքի օրապահիկը ապահովելու գործին մէջ դեր մը ունենան:

Անշուշտ այս աշխատելու գործընթացը նոյնպէս պատերազմէն մնաց, երբ շատ մը մայրեր կամ քոյրեր բարեսիրական նպատակներով ճաշ կ'եփէին, այսօր անոնք այդ մէկը ձեռով մը փոքր եկամուտի համար աշխատանքի վերածած են, եւ կարծես մեր ընտանեկան շրջանակներուն մէջ այս խօսակցութիւնն ալ սկսաւ տեղ գտնել. «Դուրսը բոլորը կ'աշխատին, ինչո՞ւ մենք ալ աշխատինք, մենք ալ պէտք է աշխատինք, որպէսզի բնականոն ձեռով կարենանք ապրիլ»:

- Ձեր կարծիքով ի՞նչ սորվեցաւ հալէպահայութիւնը այս 7 ժամը տարիներու ընթացքին:

- Շատ բաներ սորվեցաւ հայկազայութիւնը այս պատերազմին հետեւանքով: Անշուշտ այն օրինակները, որոնք պիտի ներկայացնեմ, իմ կարծիքովս է: Օրինակ՝ հայկազայութիւնը սորվեցաւ ինչպէ՞ս, եւ պատերազմէն մնացած սովորոյթ դարձաւ, որ մենք ցանկացած սենեակէ դուրս գալէ առաջ սենեակին լոյսերը անջատենք, եւ ամէն ինչ կարծես հաշիւով դարձաւ: Մեզմէ իւրաքանչիւրը նոյնիսկ ամենամանրամասն թուացող արարքը սկսանք հաշուի առնել եւ յետոյ շարժիլ եւ այս մէկը իմ կարծիքով պատերազմի հետեւանքն էր: Նոյնը ջուրի պարագային, լոյսի պարագային, տարբեր բաներու մէջ հայկազայութիւնը սկսաւ աւելի խնայողութեամբ օգտագործել ամէն ինչ եւ այս մէկը ես միայն նիւթականի խնդրին չեմ վերադրեր, այլ անոր որ՝ մենք պատերազմը ապրեցանք եւ այդ պատերազմէն սորվեցանք որ կարելի է նաեւ խնայողութեամբ ապրիլ եւ այդ բարիքը՝ լոյսը կամ ջուրը որ ունինք, հնարաւորինս երկար ժամանակի համար օգտագործենք:

Այս բոլորէն գատ, հայկազայութիւնը իմ կարծիքով, ամենակարեւոր բանը որ սորվեցաւ՝ իրար օգնելու գաղափարն էր, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը ցաւ մը ապրեցաւ եւ այդ ցաւը, այդ վտանգը, այդ կորուստը մեզի ուղղորդեցին, որ մենք իրար ձեռք երկարենք, իրար օգնենք, առաջուայ անզգամութիւնը չմնաց. Հայաստանի խաղաղ պայմաններուն մէջ կեանքը ուրիշ էր, ամէն մարդ իր անձով գոհացած էր, իսկ այսօր իրավիճակը բոլորովին ուրիշ է, մեզմէ իւրաքանչիւրին ցաւը բոլորին ցաւն է, մեզմէ իւրաքանչիւրին ուրախութիւնը բոլորին ուրախութիւնն է եւ այսպէս կը կարծեմ որ այս մէկը պատերազմի չակերտեալ՝ դրական կողմերէն մէկն է:

- Ի՞նչ կ'ուզէք ըսել «Արեւելք»ի ընթերցողներուն:

- Ամենամեծ խնդիրը որ կը դիմագրաւենք, մեր հարազատներուն, մեր ընկերներուն, մեր միջավայրին, մեր շրջապատին մէջ եղող անձերուն բացակայութիւնն

է: Պիտի ուզեմ ձեր ամպիոնէն ըսել, որ մենք շատ կարօտցած ենք իրենց, յաճախ կը փնտռենք գիրենք եւ ես չեմ ալ կարծեր, որ անոնցմէ շատերը կը վերադառնան: Խնդիրը այն է, որ արդեօք մենք պիտի վարժուինք անոնց բացակայութեան, պիտի հասկնանք որ այլեւս կեանքը պիտի շարունակենք առանց իրենց, ասի բարդ հարց մըն է, եւ միշտ պիտի փնտռենք ու յիշենք իրենց, իրենց բացակայութիւնը զգալի է մեր կեանքին մէջ, այս կէտը կ'ուզեմ լսելի դարձնել ձեր թերթի շնորհիւ: Զեմ

գիտեր, եթէ տարիներ ետք մենք պիտի մոռնանք այս կարօտը, պիտի վարժուինք այս վիճակին, բայց եւ այնպէս այս օրերուն մեզի համար շատ դժուար է, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը ունի հարազատ մը, սիրելի մը, բարեկամ մը, եղբայր մը, քոյր մը, ազգական մը, որ պայմաններու բերումով հեռացած է Հայաստան եւ այդ կարօտը միշտ մեր մէջ է:

Շատ պիտի փափաքիմ, որ բոլոր հայերը վերադառնան, բայց իմ փափաքս դժուար թէ իրականութիւն դառնայ:

### ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԿՐԱԿՈՅՑ

Շարունակուած էջ 13-էն

մը կենսագործելի: Իր հօր հետ վերջնական բաժանումի պահուն հայրը կ'ըսէ. «Տղա՛ս, չմոռնաս ազգիդ վրէժը, չամչցնես ինձի»:

Գուրգէն կը պատասխանէ՝ «Հայրիկ, միթէ՞ կը կասկածիս, որո՞ւ գաւակն եմ»: Եւ այդ կը պատահի ասկէ 45 տարիներ առաջ...:

Բնականաբար, ամերիկեան ոստիկանութիւնը կը ձերբակալէ գինք: Դատավարութիւն, սպանութեան դրդապատճառներու քննարկում, հայկական հարցի վերարծարծում կը յաջորդեն գիրար: Վճիռը՝ ցկեանս բանտարկութիւն՝ որպէս յանցագործ: Վայրը՝ Սան Լուիզ Օպիսփօ, բանտարկութիւն 7160: Հոն ան կը գրէ իր յուշերը «Նպատակ եւ ճշմարտութիւն» խորագիրով (տպուած Երեւան, 1999 թ.): Աւելի քան 10 տարի կը մնայ բանտարկուած: Ծանր հիւանդ ու մահամերձ կ'ըլլէ բանտէն՝ մնալու համար տան կալանքի տակ: 1984 Մարտ 27-ին կը փակէ աչքերը յաւիտենապէս եւ կը յանձնուի օտար հողի:

Ան ի կատար ածեց իր հօր պատգամը եւ հանգստացուց խիղճը. միաժամանակ՝ իր հերթին պատգամ փոխանցեց նորահաս սերունդներուն՝ հետեւելու իր ուղիին, որ իրականութիւն դարձաւ 20 Յունուար 1975-ին՝ ԱՍՍԱ-ԼԱ-ի ծնունդով: 45 տարիներ առաջ սկսած արդարութեան կրակոցը շարունակուեցաւ հետագային: Իր մասին գրած են տարբեր հեղինակներ՝ ինչպէս կիպրահայ Տիգրան Գայլաճեան («Sentinel Of Truth») (2013 թ.), հայրենի գրականագէտ, գրող Կարօ Վարդանեան՝ «Հատուցման Տասներեք Դօրանջ» (2014 թ.): Չարամիտներ առանց թափանցելու Եանիկեանի հոգեկան աշխարհը եւ չհասկնալով անոր ազգային արժանապատուութիւնը, խելացի, ձեռներէց ու զարգացած մարդուն համարեցին «անհաւասարակչիւ», «խենթ»: Օտարագրիներ (նաեւ կարգ մը հայեր...)՝ մեղադրական ոճով գար-

մացան՝ թէ ինչ անհեթեթութիւն եւ անիմաստ արարք, որ շուրջ 70 տարիներու զայրոյթ մը կ'արտայայտուի վրիժառական գործողութեամբ: Բայց ես ալ կը զարմանամ, թէ ի՞նչպէս սերունդ մը միայն մէկ Եանիկեան ունեցաւ 1000-ի եւ կամ 10.000-ի փոխան, որովհետեւ սերունդ մը տասնեակ հազարաւոր ձագուկներու Ալեքսանդրապոլէն Յունաստան ու Սուրիա, իրաքէն Պաղեստին ու Լիբանան, Զուիցերիայէն Եգիպտոս, Կիպրոս ու Ֆրանսա եւ այլուրեք իրենց մորթին վրայ զգացին դառնութիւնը որբութեան, զրկանքի, անօթի ու բոկ, օտարի օգնութեան կարօտ, հայրենախիլ ու թափառական, թշուառական ու հալածական, իրաւագուրկ եւ ընչազուրկ: Ապա՛ չմոռնանք, որ անոնց ականողիքին դիմաց մորթոտուեցան իրենց հայրերն ու եղբայրները, լլկուեցան եւ գողցուեցան մայրերն ու քոյրերը: Ժլուղներու եւ հրէշներու ահ ու վախի մէջ ուռճացան հազարներ ու տասնեակ հազարներ: Ինչո՞ւ միայն մէկ Եանիկեան: Կը զարմանամ ու կը զայրանամ: Արիւնալի մանկութեան մը ուշացած արձագանգը չէ՞ր արդարութեան կրակոցը: Ամերիկեան իշխանութիւնները ազատագրեցին «ոճրագործ» Եանիկեանը՝ անտեսելով այն հանգամանքը, որ անոր թիրախը պետութիւն մըն էր հայոց արեամբ եւ ինչքերուն վրայ գոյառուած: Ըստ արդարադատութեան՝ մարդասպան մը պէտք է կրէ իր պատիժը: Իսկ ի՞նչ ըսել այն նախագահներուն, որոնց հրահանգով հարիւր հազարաւոր անմեղներ կը զոհուին անիմաստ պատերազմներով Վրէթեթնամէն մինչեւ Քորէա, իրաքէն մինչեւ Սերպիա, Սոմալիէն մինչեւ Պաղեստին ու Սուրիա: Անոնք մարդասպանութեան «հերոս» նախագահներ ի պատուի են, մինչ արդարութեան կրակոցներու հեղինակներ՝ դատապարտելի: Այս ալ ամերիկեան ժողովրդավարութիւնն է երեւի...:

**ՑԱՒԱԿՑԱԿԱՆ**  
ԱՐՄԵՆԱԿ ՊՈՅԱՄԵԱՆԻ մասուան առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

**ՑԱՒԱԿՑԱԿԱՆ**  
ԱՐՄԵՆԱԿ ՊՈՅԱՄԵԱՆԻ մասուան առթիւ Կլենտէյլի Ս.Դ.Հ.Կ. «Արսէն Կիրոս» մասնաճիւղի վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Պօյամեան եւ Չարըգեան ընտանիքներուն:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՅՈԳԻ ԴԱՍԱՐ)  
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԴԱՍԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ՅԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Իբրահիմովիչը Մօտ է «Լոս Անճելոս Կելեբրի» Տեղափոխուելուն

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» շուկայ շարժակառուցող Զլատան Իբրահիմովիչը մօտ է ամերիկեան «Լոս Անճելոս Գելաքսի» տեղափոխուելուն:



ESPN-ի համաձայն՝ «Լոս Անճելոս Գելաքսիում» 36-ամյեայ ֆուտպոլիստը կարող է ստանալ տարեկան 7.7 միլիոն տոլար աշխատավարձ եւ դառնալ MLS-ի ամենաբարձր վարձատրուող ֆուտպոլիստը:

«Մանչեսթեր Եունայթեդի» հետ Իբրահիմովիչի գործող պայմանագիրն աւարտուում է այս մրցաշրջանի վերջում, իսկ չիլիացի շարժակառուցող Ալեքսիս Մանչեսի տրանսֆերից յետոյ նրա՝ մեկնարկային կազմում տեղ ունենալու շանսերն աւելի են նուազել:

Յիշեցնենք, որ ծնկաչօղի ծանր վնասուածքի պատճառով 2017-ին մօտ կէս տարի բաց թողած Իբրահիմովիչն այժմ դարձեալ վնասուածք ունի: Անգլիացի ընթացիկ առաջնութիւնում նա մասնակցել է 5 հանդիպման:

### Մեսիի Զերթական Ռեկորդը

«Բարսելոնայի» արժենթինացի շարժակառուցող Լիոնել Մեսին, կոլի հեղինակ դառնալով «Ալաեսի» դէմ Պրիմերայի 21-րդ տուրի խաղում, Սպանիայի ընթացիկ առաջնութիւնում կոլերի քանակը հասցրել է 20-ի:



30-ամեայ Մեսին առաջին ֆուտպոլիստն է, որը Պրիմերայում նուազագոյնը 20 կոլ է խփում 10 տարի անընդմէջ, տեղեկացնում է BeFoot-ը:

«Ալաեսին» «Բարսելոնան» յաղթել էր 2:1 հաշուով, իսկ Մեսին 82-րդ րոպէին աչքի էր ընկել տուգանային հարուածով:

Բացի այդ, Մեսին Սպանիայի առաջնութիւնում 21-րդ կոլն է խփել տուգանային հարուածով եւ այդ ցուցանիշով շրջանցել Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի շարժակառուցող Կրիշտիանու Ռոնալդուին: 32-ամյա Ռոնալդուն տուգանայինից խփել է 20 կոլ:

### «Բորուսիան» ու «Արսենալը» Պայմանաւորուել են Օբամեյանգի Զարցով

Լոնտոնի «Արսենալը» Դորտմունդի «Բորուսիայի» հետ փոխհամաձայնութեան է եկել զարբոնցի շարժակառուցող Պլեյ-Էմերիկ Օբամեյանգի տրանսֆերի հարցով, հաղորդում է գերմանական Kicker-ը:



28-ամեայ ֆուտպոլիստին ձեռք բերելու համար անգլիական ակումբը կը վճարի 63 միլիոն եւրօ: «Արսենալում» շարժակառուցողը կը ստանայ տարեկան 10 միլիոն եւրօ աշխատավարձ:

Օբամեյանգի փոխարէն Դորտմունդի «Բորուսիան» ձեռք կը բերի «Չելսիի» բելգիացի շարժակառուցող Միշլի Բատշուայիին:


Գերմանիայի ընթացիկ առաջնութիւնում Պլեյ-Էմերիկ Օբամեյանգը մասնակցել է 16 խաղի, դարձել 13 կոլի ու 3 կոլային փոխանցման հեղինակ: Նրա գործող պայմանագիրը «Բորուսիայի» հետ նախատեսուած է մինչեւ 2021 թուականը:

### Տեր-Չաքարեանի Ղեկավարած «Մոնպելյեն» Զկարողացաւ Դիմադրել ՊՍԺ-ին

Ֆրանսայի առաջնութեան 23-րդ տուրում ՊՍԺ-ն ընդունեց Հայաստանի հաւաքականի նախկին խաղացող Միշլի Տեր-Չաքարեանի գլխավորած «Մոնպելյեն» եւ յաղթանակ տարավ 4:0 հաշվով:

ՊՍԺ-ն 59 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը: «Մոնպելյեն» 31 միավորով 7-րդն է:

## Անկասելի Ռոջեր Ֆեդերերի 20-րդ Տիտղոսը «Մեծ Սաղաւարտի» Մրցաշարերում



Աշխարհի երկրորդ ռակետ Ռոջեր Ֆեդերերը պաշտպանեց Մելբուրնում անցկացուող թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան ախոյեանի տիտղոսը: Շուկայարացի 36-ամեայ թենիսիստը 20-րդ տիտղոսը նուաճեց «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում՝ այդ ցուցանիշով թարմացնելով սեփական ռեկորդը:

Australian Open-ի եզրափակիչում Ֆեդերերը 5 սեթում առաւելութեան հասաւ աշխարհի 6-րդ ռակետ, խորուաթ Մարին Զիլիչի նկատմամբ՝ 6:2, 6:7, 6:4, 3:6, 6:1: Մրցախաղը տեւեց 3 ժամ 7 րոպէ:

Մրցաշարի կազմակերպիչները շոգի պատճառով որոշել էին եզրափակիչ մրցախաղն անցկացնել փակ տանիքի տակ: Մելբուրնում օդի ջերմաստիճանը +37 էր:

Յատկանշական է, որ մինչեւ եզրափակիչը Ռոջեր Ֆեդերերն այս մրցաշարում անցկացրել էր 6 մրցախաղ եւ չէր պարտուել ոչ մի սեթ: Նա 6-րդ տիտղոսը նուաճեց Australian Open-ում, որում յաղթել էր նաեւ 2004, 2006, 2007, 2010 եւ 2017 թուականներին: Սա շվեյցարացու կարիերայի 96-րդ տիտղոսն էր:

Ռոջեր Ֆեդերերն ու Մարին Զիլիչը նախկինում հանդիպել էին 8 անգամ (շուկայարացին տարել էր 7 յաղթանակ), իսկ Australian Open-ում մրցեցին առաջին անգամ:

29-ամեայ Մարին Զիլիչը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում ունի մէկ տիտղոսը, որը նուաճել է US Open-2014-ում: Ուիմբլդոն-2017-ի եզրափակիչում խորուաթ թենիսիստը դարձեալ պարտուել էր Ռոջեր Ֆեդերերին:

Յիշեցնենք, որ Ֆեդերերը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերից նաեւ 8 անգամ յաղթել է Ուիմբլդոնում, 5 անգամ՝ ԱՄՆ-ի բաց առաջնութիւնում, 1 անգամ՝ «Ռոյան Գարուսում»: «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում երկրորդ ամենաշատ տիտղոս նուաճած թենիսիստն աշխարհի առաջին ռակետ, իսպանացի Ռաֆայել Նադալն է, որն ունի 16 տիտղոս: Եռեակը եզրափակում է լեգենդար ամերիկացի Պիտ Սամպրասը՝ 14 տիտղոս:

Բացի այդ, Ռոջեր Ֆեդերերը դարձաւ առաջին թենիսիստը, որ 6-ական անգամ յաղթեց «Մեծ սաղաւարտի» 2 մրցաշարերում (Ուիմբլդոն եւ Australian Open):

### Փենցհան-2018-ին Կը Մասնակցեն Ռեկորդային Թուով Օլիմպիականներ

29-րդ ձմեռային Օլիմպիական խաղերում հանդէս կը գան ռեկորդային թուով մարզիկներ:

Փհենցհան-2018-ին կը մասնակցեն 92 երկրների 2925 մարզիկներ, ինչը ռեկորդային ցուցանիշ է ձմեռային Օլիմպիական խաղերի պատմութեան մէջ: Նախօրէին աւարտուել է յայտերի ընդունումը:



Առաջին անգամ ձմեռային Օլիմպիական խաղերում հանդէս կը գան Մալդիվացի, Սինգապուրի, Էկուադորի, Նիդերլանդի, Կոստովոյի եւ էրիթրեայի մարզիկները, յայտնում է BBC-ն:

Ամենամեծ պատուիրակութիւնը կ'ունենայ ԱՄՆ-ը (242 մարզիկ), իսկ Գանատան երկրորդ տեղում է (226 մարզիկ):

Հայաստանը Փհենցհան-2018-ում կը ներկայացնեն դահուկորդներ Միքայէլ Միքայէլեանը, Կատրին Գալստեանը եւ լեռնադահուկորդ Աշոտ Կարապետեանը:

Օլիմպիական խաղերը կը կայանայ փետրուարի 9-25-ը Հարաւային Բորիայի Փհենցհան քաղաքում: 15 մարազաձեւերում կը վիճարկուի մետալների 102 հաւաքածու:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net